

ԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

# ԿԱՐՄԻՔ ՏԱՒՏԱԿԻ ԿՐՈ

891.99  
Հ-85

ԱԶԴՎ-ԱՎԳԾՈՎՑՈՒ ՅԵՐԿՐՈՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ

6 NOV 2011

891.99

2-85

ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



891.54-4

# ԿԱՐՄԵՐ ՏԱԽՏԱԿԻ ՎՐԱ

ՈՉԵՐԿԵՐ

891.99 42849-63

2-85

Կամոյի կամոյի

ՎԱԼ-54	3/15/80
ՎԱԼ-54	3/15/80
ՎԱԼ-54	6/15/80
ՎԱԼ-54	9/15/80



1934

ԱԶԲ-ԱԵՎՈՎՃԱՆ ՅԵՐԿՐԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
ՈՂՍՏՈՎ-ԴՈՒԻՆ ՎՐԱ



Ч 849-63

Ответственный редактор Г. А. ПОТЕНЦ

Сдано в набор 29/1 1934 г.  
Издание с-х 88 3666  
Статформат А5-148x210,  
Уполярный Б-234

Тех. редактор О. ТЕРДАВЫДОВ

Подписано в печать 19/III 1934 г.  
Об'ем 3<sup>3/4</sup> печ. лист  
Заказ № 621  
Тираж 1500

Тип. им. „Стакки 1902 г.“ АЧКПО Ростов н-Дону

ՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՅՈՒՄԱՎՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՅԵՐԿՐԱ-  
ՅԻՆ ԿՈՄԻՏԵՅԻ ՅԵՎ ԽՈՐՉՈՒՐԴՆԵՐԻ ՅԵՐԿՐԱՅԻՆ  
ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՍԻ «ՊՐԱՎԴԱՆ»  
ՀԱՄԱՍԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ՏԱԽՏԱԿԻՆ Ե ԲԱՐՁՐԱՑՐԵԼ  
ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՈՍՅՈՒԻ ԸՆԿԵՐ ՄՐԿՈՅԱԼԻ ԱՆՎԱՆ ՄՏ  
ԿԱՅԱՆԻ ՔԱՂԲԱԺՆԻՆ ՅԵՎ ՔԱՂԲԱԺՆԻ ՊԵՏ ԸՆԿԵՐ  
ԴՈԿՈՒԿԻՒՆԻՆ:

Անցյալ տարի ՄՏԿ սպասարկման կոլխոզները պե-  
տությանը հանձնեցին 88 հազար գենտմեր հացահատիկ,  
ի սկ այս տարի 91 հազար գենտմեր: 1932 քվին ՄՏԿ-ի  
սպասարկման կոլխոզներում մեկ աշխորին միջին հաշ-  
վով ընկերում եր 2-3 կիլոդրմ հացահատիկ, այս  
տարի—միջնորդ 10 կիլոդրմ: Լրիկ կերպով ամբարված  
են սերմային յեկ ապահովագրական ֆոնդերը:

Քաղրածինը մեծ աշխատանք է կատարել յերեխաների  
յեկ ծերերի մեջ: Պիսերների գրեթեվ հեծելազրական,  
ջոկատները հետեւյում եյին կոլխոզային դաշտերին: Հաս-  
կերի հավաքը տվեց 700 գենտմեր լրացուցիչ հացա-  
հատիկ:

Այժմս ՄՏԿ լավ է կազմակերպել գարնանացանի կամ-  
պամիայի նախապատրաստման գործը:

## Չրույց պետի յեվ ուրիշների հետ

Տասնուհինգ տարեկան հազիվ լինելի:

— Գնա, Նիկոլայ, — ասաց հայրս, — վաստակիր և ապրիր սեփական քրտինքով: Հերիք ե, քեզպեսներն առդեն տուն են պահում, իսկ դու մոռւթդ ախոռը կոխած, միայն ուտել գիտես...

Հորս նախատինքն իմ վրա այնքան ել չազդեց: այդ յես արդեն վաղուց գիտեյի: Հայրս թիթեղազործ եր յեվ աշխատում եր Պիտերում: Պատս ել մեզ հետ եր ապրում: Նա յել աշխատում եր Պիտերում, բաննահ եր: Նրանք շատ սակավ եյին լինում տանը: Մենք ապրում եյինք գյուղում և շատ հեռու եյինք Պիտերից:

Մեր ընտանիքը մեծ եր, իսկ ապրուստի միջոցները չնշեն, ենպես վոր հորս այդպիսի վերաբերմունքը մազաչափ անգամ սրտիս չկպափ: Մայրս, ինարկե, լացեց, բայց այդ միայն լաց եր... Մայրական քնքշություն:

Հացի մի սեզ կտոր տոսլրակի մեջ շալակս առած, տանից դուրս յեկա. թե ուր եյի գնում, յես ել չգիտեյի: Իվանովսկի արդյունաբերական մարզում գուցե մի անկյուն կդամսվեր. ենպես վոր ինձ համար անորոշ, բայց հույսը սրտումս, յես ուղեգործեցի դեպի կոստրոմե քաղաքը, վորն ավելի մոտ ել շրջանին:

Մի տարի յեր արդեն, վոր բացակայում եյի տանից — թե ինչով եյի պարապում յես ել չգիտեյի, ավելի ճիշտ, յես պարապում եյի ամեն ինչով, բայց յեվ այնպես վոչնչով: Մի տեսակ անապաստան կյանք եյի վարում:

Տանից տարի և կես բացակայությանս ժամանակ, այնուամենայնիվ մի բան սովորել եյի: Շուտով միտքս ընկավ հայրենական գյուղը, ընտանիքը, մայրս... Մի գեղեցիկ որ գյուղ վերաբերձա: Ընտանիքի վիճակը նույնն եր մնացեր: Յերկար չմնացի գյուղում, լավ թե վատ, քաղաքը մի տեսակ քաշում

Եր: Ասենք յերկարացնելու կարիք չկա. շուտով ինձ հաջողվեց դործուղում ստանալ և մեկնել կոստրոմե, կուսակցական դպրոց:

Շատ լավ և հաջող ավարտեցի կուսդպրոցը: Ինձ դպրոցից չթողեցին, այլ պահեցին դպրոցում, վորպես դասատու... Դասատույի պաշտոնից շուտով ինձ առաջ քաշեցին և գործարաններում կուսակցական—կոմյերիտական աշխատանք տվեցին:

Հիշում եմ, մեկ անգամ ինձ հանձնարարեցին տեկստիլի բանվորների համար, մոտակա Արեվելքի մասին զեկուցում կարդալ: Յերեք որ ու յերեք գիշեր յես պատրաստվեցի այդ գեկուցման համար: Յեվ ահա թղթերի ու գրքերի մի կույտ կոնսատակիս գնում եմ զեկուցման:

Բանվորները հավաքվել եյին: Նրանց թիվը չորսհարյուրից ավելի կլիներ: Զմեռ եր: Դահլիճը, վոր հատկացված եր այդպիսի հավաքների համար, շատ փոքր եր: Ինձ վորպես զեկուցողի, տեղ հատկացըրին հենց վառարանի մոտ: Դահլիճի ողը սարսափելի հեղձուցիչ եր և ծխելուց ավելի ու ավելի յեր դժվարանում շնչառությունը: Խոսել հնարավոր չեր, և բացի այդ, ինչպես յերեկում եր, յես այնքան ել ճարտարախոս չեյի:

Շոգն արդեն խեղդում եր ինձ, ջրի պես հոսում եր քրտինքը: Նեղն եյի ընկել, սրա վրա ավելացրած և այն, վոր դահլիճում աղմուկ եր, կարծես վոչ վոք ինձ չեր լսում: Մի քանի պառավներ առաջին շարքի ձախ անկյունում ինչ վոր տաք զրուցի եյին բռնվել: Յես ամեն կերպ ճիք եյի թափում վոչ սիայն մտքերս պարզ արտահայտելու և զեկուցումն ավելի մատչելի դարձնելու վրա, այլ և նրա, վորպեսզի դահլիճում լսություն լինի: Առաջին շարքերում նստած եր նաև թափ բեխերով, ազգեցիկ, խոժոռ աչքերով, բավականին հալթանդամ մի բանվոր: Ինչպես յերևաց, այդ բանվորը կարծես թե հասկացավ իմ զրությունը, տեղից վեր կացավ և իր խորաթափանց աչքերով մի պահ նայեց բոլոր ժողովականներին: Շատերը տեսնելով նրա ցցված հասակը և խոժոռած դեմքը, լուցին:

Յես շարունակեցի զեկուցումս:

Մի ուրիշ հետաքրքրություն ունեյին եղ որերը, բայց դե անցան, գնացին:

Յերը ինձ ուղարկեցին Մյասնիկյանի շրջանն աշխատանքի, վերջին անգամ յես աշխատում եյի Համամիութենական կարմիր Պրոֆեսիոնալ Միությունների գլխավոր խորհրդում: Յեվ այդպես յես ընդունեցի Մյասնիկյանի քաղբաժնի պետի պարտականությունը: 1933 թվի մարտի 20-նն եր: Յես արդեն անցել եյի

քաղբաժնի աշխատանքներին: Շրջանի վիճակն այնքան ել միմիթարական չեր: ՄՏԿ-ն ճիշտ դիրք չեր բռնել դեպի կոլտնտեսությունները, վորն ստեղծել եր մի տեսակ լարված փոխհարաբերություն ՄՏ կայանի և կոլտնտեսականների միջեւ: Գարնանացանը վիժման վտանգի տակ եր, իսկ ՄՏԿ-ն կարծես վոչինչ չգիտեր կամ վոչինչ չեր ուզում իմանալ, այդ նրա «գործը չեր»: Մի խոսքով ՄՏԿ-ի չինովնիկական վերաբերմունքը շատ եր անդրադարձել կոնտնտեսությունների աշխատանքների վրա: Լծկան անսառնները շատ անմիտթար գրության մեջ եյին գտնվում, գյուղատնտեսական ինվինտարը դեռ չեր վերանորոգված և կարգի բերված:

Սխալ եր դրված աշխատանքի գնահատման գործը կոլտնտեսություններում: Կանացի աշխատանքը գնահատվում եր ավելի քիչ, քան աղամարդկանց: Կոլտնտեսությունները չունեյին աշխատանքի հատուկ, ոպերատիվ պլան: Աշխատանքը մի տեսակ կազմալուծված եր: Արդպես եր փաստորեն վիճակվածը ՄՏԿ-ում և կոլտնտեսությունում:

Այդ խնդրի առթիվ առաջին ժողովը հրավիրեցինք մարտի 24-ին, վորից հետո աշխատանքը փոխազրկեց դեպի դաշտ, դեպի արտադրություն: Դժվար եր ինձ համար աշխատել այդ շրջանում, նամանավանդ, վոր լես չգիտեյի հայերեն լեզուն: Իսկ յերբ գործի անցա, յերբ աշխատանքն սկսեց յեռալ և հունը մտնել, մի տեսակ թեթեվություն գացի, չնայած նրան, վոր հիմա յել չգիտեմ հայերեն լեզուն, սակայն այդ մասին հետո:

Թե ինչպես մենք առաջ անցանք, թե ինչպես մեր շրջանը, մեր քաղբաժնը առաջնությունը վերցրեց և արժանացավ համամիութենական կարմիր տախտակին, այդ առթիվ յես մի քանի խոսք կասեմ:

Նոր եյի աշխատանքի անցել, յերբ մի անգամ կարիք յեղավ «Կոմսոմոլեց» կոլտնտեսությունը գնալ, վորովհետեւ այնտեղ գարնացանի աշխատանքները վատ եյին ընթանում:

Մտնում եմ կոլխոզի վարչությունը: Տրակտորիստների և ուրիշ աշխատառողների ժողով ե: Որակարգում դրված և ինվենտարի վերանորոգման հարցը:

Խոսում ե կոլտնտեսության նախագահը:

— Ինչու ինվենտարի ուժմօնտը մինչև հիմա չի վերցել, — հարցնում ե նախագահը: Ինչու, ո՞վ ե մեղավորը, — շարունակում ե նա:

— Դուք, այս, դուք, յեվ ուրիշ վոչ վոք, — շեշտակի պատասխանում ե նա:

— Հիմի, — շարունակում են նախագահը, առաջարկում եմ ձեզ անցնել գործի, հասկացաք, ել յերկարացնելու կարիք չկա: Յես պահանջում եմ, վոր յեկու որվա ընթացքում աշխատանքը վերջացած լինի:

— Հարցեր չկան, խոսակցությունը վերջ տալու տոնով հարցնում են նախագահը:

Ժողովականները լուռ են. վոչ մի ձայն և վոչ մի ծպտուն:

— Այդպես ուրեմն, — շարունակում են նախագահը, — յերկու որ յեզ վոչ մի ժամ ավելի, իսկ հիմա կարող եք ցրվել, ել ուրիշ հարցեր չունենք:

Ժողովը փակվում ե, բոլորն սկսում են ցրվել: Յես տեսնելով, վոր գործը անհաջող վերջ ե ունենալու, մոտենում եմ ժողովականներից մեկին և հարցնում:

— Դուք ինչ աշխատանք եք կատարում կոլտնտեսությունում:

— Դարբին եմ, պատասխանում ենա:

— Այդ շատ լավ ե, իսկ ինչո՞ւ դուք չխոսեցիք ժողովում, թե ինչ պատճառներից ե վերանորոգումը կաղում:

— Ե՛, ընկեր, ինչ խոսել, միթե բոլորը չդիտեն. բոլորին ել հայտնի յե պատճառները: Ինչպես յերեվաց, մեր խոսակցությունը դրավեց մյուսների ուշագրությունը:

— Հիմա ինձ հետաքրքիր ե, շարունակում եմ յես, — թե դու ինչ աշխատանքով ես զբաղված:

— Վհա՞մի, պատասխանում ե դարբինը:

— Ի՞նչպես, իսկ վերանորոգումո....

— Ե՛, ընկեր, ինչ վերանորոգման մասին կարելի յե խոսել, յերբ դարբնոցում ցրտից շուն կստկի, յերբ վերանորոգման յենթակա գութաններն ու ուրիշ գործիքները պառկած են ձյունի տակ: Հազար անդամ ասել եմ նախագահին, վոր դարբնոցը տաք պիտի լինի, ածուխ ե հարկավոր, մարդ ե հարկավոր գութանները ձյունի տակից դուրս քաշելու համար: Յես հո չեմ կարող մի ձեռքով հազար գործ անել:

Կարծես թե ժողովը նորից սկսվեց: Մյուսներն ել սկսեցին մասնակցել մեր խոսակցությանը: Յեզ, ինչպես ասած, այս «անորինական» ժողովում մենք վորոշեցինք. թե ինչպես անել, վորպեսզի ինվենտարը ժամանակին վերանորոգվի:

Հետաքրքիր ե յեզ մի ուրիշ դեպք:

Հնձի ժամանակն եր: Գնում եմ «26 կոմունարներ»-ի անվան կոլտնտեսությունը, վոր գտնվում ե Մեծ Սալայում: Մոտենում եմ կալերից մեկին, տեսնում եմ կալսիչը կանգնած ե և չի աշխատում: Կանչում եմ բրիգադիր Շառլոյանին:

— Ինչո՞ւ կալսիչը չի աշխատում, — հարցնում են նրան:

— Զգիտեմ, — պատասխանում ե նա: Սկսում եմ հետաքրքրվել և տեսնում եմ, վոր կալսիչը ճիշտ չի դրված: Հավաքվում են մի քանի տղերք, կալսիչն ուղղում ենք և սկսում ե աշխատունք:

— Կալսիչը լիվ բեռնվածություն ունի, հարցնում եմ բրիգադիրից:

— Վհա՞մ, — պատասխանում ե բրիգադիրը: Ավելի ճիշտ՝ և կատարում ե, և չի կատարում:

— Ինչո՞ւ...

— Զգիտեմ, — պատասխանում ե նա:

Յես կարծես թե զիսի յիմ ընկնում և սկսում եմ հարց ու փորձ անել բրիգադիրին:

— Քանի՞ հոգի յե աշխատում կալսիչի վրա:

— Մշտական թիվ չկա, — պատասխանում ե բրիգադիրը:

— Դու քո բրիգադի ցուցակն ունեն:

— Վհա՞մ, ընկեր Դուկուկին, — պատասխանում նա: Կալսիչի վրա մրշտ նույն մարդիկ չեն աշխատում, այսոր մեկը, վաղը մյուսը և այդպես...

— Այ, տեսնո՞ւմ ես, հենց դրանից ե, վոր քո կալսիչը նորման չի կատարում: Հարկավոր ե պահանջել վարչությունից, վորպեսզի առաջին՝ քեզ տան այնքան աշխատով, վորքան հարկավոր ե, յերկրորդ՝ վորպեսզի կալսիչի վրա միշտ միևնույն մարդիկ աշխատեն և յերրորդ՝ հարկավոր ե աշխատողներին մարդիկ աշխատեն հերթի, թե չե մի հերթի աշխատանքն արտադրողականությունը չի բարձրացնի: Հետո յել, ախր չե վոր մարդ ե, հոգնում ե... Այս, բրիգադիր Շառլոյանն այդպես ել արեց: Նա մըցում եր մի ուրիշ բրիգադի հետ և միշտ հետ եր մնում նրանից, իսկ հետո առաջ անցավ և որինակելի դարձավ:

Արդպիսի գեպքերի, մարդկանց ու նրանց գործերի մասին շատ կարելի յե պատմել. թեկուզ վերցնենք մի յերկրորդ գեպքը:

Հնձի մամանակն ե, գնում եմ դաշտ: Ճանապարհին անցնում եմ կալատեղից: Ցերկու կողանտեսականներ նստած հնձիչի ատամներն են սրում: Բարեվում եմ ու մի պահ հետաքրքրվում նրանց աշխատանքով: Տեսնում եմ, վոր վատ են սրում: Մի բոպե հիշողությանս մեջ շփոթվում ե անցյալը: Մոռացա ասել վոր յես տոկար եմ, և եղ իմ արհեստը պատանի ժամանակս եմ սովորել իվանովսկի արդյունաբերական մարզի,

իմ հայրենիքի, այսպես ասած, արհեստանոցներից մեկում:  
Հա, վեր եմ հիշում տոկարությունս և այն՝ թե ինչպես եյինք  
մենք սրում այս կամ այն գործիքը: Մոտենում եմ «ատամ»  
սրող տղերքին:

— Ընկեր, այդպես չեն սրի, ասում եմ, այդքթացնել են շանա-  
կում և վոչ թե սրել: Մեկ ել, չե՞ վոր հնձիչը կարող ե շուտով  
նոր և սուր ատամների կարիք զգալ, հարկավոր ե արագ աշ-  
խատել:

— Ե՛, ընկեր Դոկուկին, — պատասխանում ե նրանցից  
մեկը, — դուք չգիտեք, ես գործը վարպետի, գյուղացու գործ ե:

Յես այլևս չեմ վիճում նրանց հետ, այլ մեկի ձեռքից  
վերցնում եմ սրիչը ու ցույց տալիս, թե վոնց ե հարկավոր  
սրեր. Նրանք իսկապես վոր զգացին մի տեսակ ամոթ և շա-  
րունակեցին իրենց գործը, հստելով իմ ցույց տված որի-  
նակին:

Հանկարծ աչքս առնում ե մի կույտ ժանգոտված և ան-  
խնամ կերպով գետին թափթփած հնձիչի ատամների վրա:

— Սա ի՞նչ ե, — հարցնում եմ յես նրանցից, ցույց տալով  
«ատամների» կույտը:

— Մենք վոչինչ չգիտենք, — պատասխանում ե մեկը, —  
հարցը բրիգադիրից:

— Ի՞նչպես թե, իսկ ձեղ չի հետաքրքրում արդյոք, վոր  
կոլտնտեսության ունեցվածքը եսպես փշացնում են:

— Բրիգադիրն ե մեղավոր, — ավելի շեշտակի ասում ե  
նրանցից մեկը:

— Մենք մի քանի անգամ առել ենք նրան այդ առթիվ,  
իսկ նա միջոցներ ձեռք չի առնում:

— Ուրեմն այդպես, բրիգադիրն ե մեղավոր, — շարունա-  
կում եմ յես դիմելով մի փոքրիկ խորամանկության:

— Լավ, մի բոպե գործդ թող և գրիր ես թղթի վրա. — յես  
մեկնում եմ նրան իմ ծողատերը:

— Գրիր, վոր ես բանի մեղավորը բրիգադիրն ե, հետո  
յես նրա հետ կխոսեմ:

Նրանք լրում են, վոչ մեկը նրանցից չի մոտենում թըղ-  
թին: Տատանվում են: Առաջինը նրանցից ամոթից մի տեսակ  
կարմրում ե:

— Դէ, ինչ ես կանգնելու...

— Ներողություն, ընկեր Դոկուկին, — կարկամելով սկսում ե  
խոսել նրանցից մեկը: — Եղ գործի պատասխանատուն մենք  
ենք, մեղ ե հանձնարարված եղ գործը, մենք ենք մեղավորը:

10

Խոսք ենք տալիս, վոր այսոր մինչև յերեկո եղ բոլորը կար-  
գի կրերենք:

— Լավ, եղ դեպքում աշխատեք, բայց մյուս անգամ եղ-  
պիսի բաներ չտեսնեմ:

Յես կուզեյի անկեղծ սրառվ պատմել ևս մի դեպք: Նա  
մի վարկյան լոռության մեջ խոր շունչ քաշեց յերիտասարդին  
հատուկ թարմությամբ ևնրա չաղիկ գեմքը մի պահ ալիքավոր-  
վեց, վառվուն աչքերը մի տեսակ քաղցր ժպտացին:

— «Հեղ-ալիք» կոլտնտեսությունումն եմ զանգում, բջիջի  
քարտուղար Զարդարն ել հետս եր: Այդ ժամանակ մեզ մոտե-  
ցավ բրիգադիրներից մեկը.

— Ընկեր Խարախաշյան, — դիմեց նա Զարդարին — ախր ի՞նչ  
անեմ ե...

— Ի՞նչ ե պատահել ելի, — հարցը Զարդարը:

— Տո եղ անտեր կալսիչը նորման չի կատարում, չեմ հասկա-  
նում թե ինչիցն ե:

— Իսկ ի՞նչպես են աշխատում տղերքը, — հարցնում ե Զար-  
դարը:

— Թվում ե թե վատ չեն աշխատում, — պատասխանում ե  
բրիգադիրը:

— Ի՞նչպես թե թվում ե, լավ են աշխատում, թե վատ:

— Իմ կարծիքով լավ են աշխատում...

— «Իմ կարծիքով», «թվում ե», չգիտեմ ելի ինչ — ասում ե  
Զարդարը մի տեսակ ներքին վրդովանքով:

— Լավ հիմի կգամ, — պատասխանում ե նա բրիգադիրին  
զսպելով իրեն:

— Ընկեր Դոկուկին, յեթե նեղություն չի լինի, յես այս բո-  
պեյին կգամ: Գնամ տեսնեմ, ելի ինչ ե պատահել կալատեղում:

— Սատանան տանի, — խոսում ե նա ինք իրեն. կալսիչի  
տեխնիկայից ել լավ չեմ հասկանում, գաղափար չունես, վոր  
եսպիսի ժամանակ յախցը գաս:

— Սպասելու կարիք չկա, — պատասխանում եմ յես, գնանք  
միասին:

Մենք ճանապարհեցինք դեպի կալատեղ: Վոչ այնքան  
յերկար քննելուց հետո պարզեցինք, վոր կալսիչը վոչ մի  
վասպած տեղ չունի և պարտավոր ե նորման կատարել:

— Դէ, տղերք, ապա մի փորձեք աշխատել, — հնչում ե Զար-  
դարի ձայնը:

Բրիգադը գործի յե անցնում: Կալսիչը սկսում ե աշխա-  
տել: Մենք հետեւ վում ենք աշխատանքի ընթացքին: Մեքենան

11

ժամացույցի պես ճիշտ և աշխատում: Յերբ արդեն մի ժամ անցած կիներ, ինչ սկսել եր աշխատել մեքենան, մենք աչքի չափով քննեցինք հետևանքը: Իսկապես, նորման չեր կատարվել: Վերջին կալմն եր, կոլխոզում տիրում եր մի տեսակ անհանգստություն:

— Ամեն ինչում առաջինը դուրս յեկանք, եստեղ պետք ե հետ ընկնենք,— կոմիտում եյին շատերը:

— Վ՛չ,— ասաց Զարդարը, մենք սովորություն չունենք յետ մասու. նորմայի չկատարվելու պատճառը թույլ աշխատանքն եւ:

— Դե, ընկեր Դոկուկին, դուք կարող եք գնալ, դուք զբաղված մարդ եք, իսկ կալմի մասին անհոգ յեղեք: Մեր կոլխոզը պետք եւ պարտավոր ե առաջին տեղը գրավել: Յես կմնամ այստեղ, յես պետք ե աշխատեմ կալմիչի վրա:

— Զահելություն մի արա, — ասաց հասակավոր կոլտնտեսականներից մեկը, — ես քո ուժի բան չի:

— Կտեսնենք, — ասաց Զարդարը և թուավ դեպի կալմիչը: Լոքոմոբելը սկսեց ծխալ, փոկն սկսեց կատաղի պտույտներ գործել և կալմիչը նորից գործի անցավ: Մինչեւ հեռանալս, յես դեռ յերկար նայում եյի այդ հրապուրիչ տեսարանին: Կալմիչ գլխին, մի քանի ուրիշ աշխատողների հետ, կուչ ու ձիգ եր անում ե Զարդարը: Չորս ժամ անընդհատ, առանց մի թեթեվ շունչ քաշելու, նա յեղանով խրձեր եր շպրտում կալմիչի բերանը: Մյուտներն ել հետեւում եյին նրան: Նրանք բոլորն ել առույգ և ուժեղ տղամարդիկ եյին: Յերեւելում եր, վոր բրտինքը պատել ե նրանց: Բայց տղամարդության նամուսը թույլ չեր տալիս նրանց, առաջինը հայտնելու հանգստանալու ցանկությունը:

— Ինչպես, միթե նրանք ավելի թույլ կարող եյին լինել Զարդարից:

— Մալպեց, — չկարողանալով զսպել իր հուզմունքը, բացականչեց այն հասակավոր կոլտնտեսականը, վորը քիչ առաջ ջանալություն անվանեց Զարդարի ցանկությունը:

— Ուրիշ է, ուրիշ եղ աղջիկը: Համա եղ մասին հետո, ավելի ճիշտ՝ յես խորհուրդ կտամ նրա հետ առանձնապես խոսել:

Յեղել եք արդյոք դուք այնպիսի վիճակում, յերբ ձեր սիրար լիքն ե յեղել մի տեսակ անսահման խինդով, ուրախությամբ, հուզմունքով, վոր ստիպում ե ձեզ ծիծաղել, պարել, թուչկոտալ, ծափ տալ: Ահա այդպիսի անսահման խինդով, վոգեվորությամբ, հուզմունքով եր խոսում նիկոլայ Ալեքսանդրովիչ:

12

Դոկուկինը, յերբ պատմում եր կոլտնտեսության ունեոր կյանքի պայքարին նվիրված բջիջի քարտուղար — Զարդարի մասին:

Յեկ չանցած մի քանի որ, քաղբաժինն ստանում ե «Հեղալիքի» ռապորտը:

«Կարս ավարտել ենք և կառավարության պարտքը հանձնել: Անցել ենք աշխատանքներին: Շուտով սկսելու յենք բերքաբաշխումը»:

«Հեղափոխության ալիք» Զարդար

— Ուրիշ են եղ մարդիկ, ընկեր, ուրիշ Ավելի ճիշտ, ուրիշ են դարձել նրանք, փոխվել են, այլևս նման չեն իրենց: Յեթե ժամանակը ներեր, գուցե յես շատ բաներ պատմեյի ձեզ, բայց կներեք: Յես հիմա մի տեսակ սովոր եմ եղ մարդկանց հետ աշխատել: Իմ աշխատանքի առաջին շրջանում զգացած խորդությունները հիմա փոխվել են մի տեսակ հարազատության: Յես ել եմ փոխվել, այդ յես զգում եմ: Ինձ թվում ե, թե 29 տարեկան հասակում յես մի տեսակ վերածնվել եմ. այն չեմ, ինչ յեղել եմ 29 տարի շարունակ:

Յեկ յերբ շատ հաճախ, աշխատանքից մի տեսակ հոգնած ես լինում, այդ մարդկանց, այդ կոլտնտեսականների մոտ գնալիս, լինի զա ջահել, թե ծերունի, միենույն ե, մի տեսակ հանգստություն ես զգում, կարծես թե թարմանում ես: Մենք դադարեցինք զգուցելուց և անցանք մեքենատրակտորային կայանը մի փոքրիկ եքսկուրսիա կատարելու:

Զալթրից վոչ այնքան հեռու, ճիշտ նրա կողքին մի բարձրության վրա, ցցվում են ինչ վոր շինություններ: Քաղաք տանող մեծ ճանապարհի հենց կողքին, փառավոր շքեղությամբ, փովում ե ՄՏՀ-ն իր նոր և խրոխտ շինություններով:

Սհա նրանցից առաջինը:

Հսկայական մի կառուցվածք բարձր և խրոխտ աղյուսեայուներով, թիթեղյա տանիքով. այստեղ են ձմեռում կոմբայները: Հետո ուրիշ շատ այդպիսի ծածկոցներ, վորաեղ պահվում են զանազան տեսակի ու մեծության գյուղատնտեսական մեքենաներ: Այդ բոլորն ել վերանորոգված, պատրաստ, սպասում նն զարնան գալուն, նոր ցանքսին և ուրիշ նույնանման աշխատանքների:

Մենք անցանք արհեստանոցները: Դա մի մեծ, արտաքինից բավականին գեղեցիկ շենք ե, չորս կողմից բարձր ու լայն

13



Քաղաքացի պետ ընկ. Դոկտորին

դարբասներով և լուսամուտներով։ Մանում ենք ներս, այնտեղ ինչ վոր շինարարական աշխատանք եր կատարվում։

— Այս ինչ խողովակներ են անցկացնում, — հարցնում եմ յետ։

— «Պարավոյ ատապլենի» յեն անցկացնում։ — պատասխանում ե ինձ կուսկովեկտիվի քարտուղար ընկեր Ախոյան Գեվորգը։ Զմեռն արհեստանոցներում ցուրտ ե լինում, հարկավոր ե տաքացնել, իսկ սովորական վառարանները չեն տաքացնում, չնայած նրան, վոր ահազին ածուխ ե ծախսվում։

Արհեստանոցի առաջին և ամենամեծ ցեխում, իրար հետեւվից շարված են մի շարք տրակտորներ, նրանցից շատերը խորհրդային արտադրություն ե։

— Սովետական ե, պատասխանեց բանվորներից մեկը, յերբ յես նրան հարցը իր տրակտորի ինչ սիստեմ լինելը։

Ցեխում յեռում եր տրակտորների վերանորոգման աշխատանքը։ Ամեն մի տրակտորի վրա աշխատում եր յերկու մարդ։ Ինչպես յերեվաց, նրանցից շատերն իրենք տրակտորիստներ եյին, վորոնք ուզում եյին ել ավելի խորն ու հիմնովին ուսումնասիրել տրակտորի տեխնիկան։ Ցես ծանոթացա տրակտորիստներից մեկի հետ, նրա անունը Ղուկաս ե, Սուխարյան Ղուկաս։ Դա վոչ այնքան բարձրահասակ, առույգ կազ-

մվածքով, առնական դեմքով և հաստ մազոլոտ ձեռքերով, քսանյերկու տարեկան մի կիսաբանվորական արտաքինով յերիտասարդ եր։

— Քանի՞ տարի յե, վոր տրակտորիստ ես, — հարցնում եմ յես։

— Յերեք, պատասխանում ե նա։

— Վոր գյուղից ես։

— Թոպտիլից։

— Կոլխոզի անդամ ես։

— Այո։

— Ի՞նչպիս յեղավ, վոր տրակտորիստ դարձար։

— Յեղավ ելի, — պատասխանում ե նա թեթեվակի ժըպտալով։

— Իսկ ի՞նչպիս յեղավ, այդ ե ինձ հետաքրքիրը, — շարունակում եմ յես։

— Ընկեր, ախր եղ յերկար պատմություն ե. դե վոր ուզում եք, կպատմեմ։

— Եսպես եր, — սկսեց իր պատմությունը Ղուկասը։ Յերբ յես կոլխոզ մտա — եղ 1930 թվին եր — մեր կոլխոզում մի քանի հատ տրակտորներ կային, համա տրակտորիստ մենք չունեյինք։ Ես մեր ՄՏԿ-յում, տրակտորի կուրսեր բացվեց։ «Սոցփարոս» կոլխոզի, այսինքն՝ մեր կոլխոզի վարչությունը վորոշեց ինձ ուղարկել եղ կուրսերը։

Այնուհետև Ղուկասը պատմեց, թե ինչպես սկզբի շրջանում քաշվում և դժվարանում եր սովորել։

— Ցես համարյա անգրագետ եյի, — շարունակեց նա, ենպես վոր շատ դժվար եր ինձ համար սկզբից և յեթ սովորել կուրսերի պարմաններին։ Նա շատ գոհ եր մնացել իր ուսուցչի Մովսեսյանից, վորի նկատմամբ մինչեւ հիմա յել մի խոր հարգանք ե տացում։

— Յերբ յես մոտիկից ծանոթացա տրակտորին, շատ սիրեցի եղ մաշինը և վորոշեցի, ինչ ել վոր լինի, տրակտորիստ պիտի դառնամ։ Շուտով կուրսերն ավարտեցինք և ամեն մեկս ստացանք մեր տրակտորը։ Ցես շատ հաջող ավարտեցի կուրսերը, — մի տեսակ հպարտությամբ ասում եր Ղուկասը։

Իմ տրակտորն ամերիկական «Կեյս» սիստեմի յեր, № 49-ը։

Կուրսերի ավարտականը ստանալու համար, հարկավոր եր յերկու տարի աշխատել։ Հետո Ղուկասը պատմեց՝ թե ինչպես նա արդեն յերեք տարի աշխատում ե միենույն տրակտորի վրա և մինչև հիմա նրա տրակտորը լուրջ վնասներ չի ստա-

յել և վերանորոգման չի յեղել, բացի ընթացիկ վերանորոգումից:

— Յես իմ տրակտորը աչքի լույսի պես եյի պահում: Յեթե հարկավոր եր գիշերային աշխատանք կատարել, յես թույլ չեյի տալիս ուղիներին աշխատել իմ տրակտորի վրա, վորովճետեվ գիշերային աշխատանքը վտանգավոր ե տրակտորի համար:

— Դու վ՞որ կոլխոզումն եյիր աշխատում,—հարցրի յես:

— Գլխավորապես մեր «Սոց-փարոս»-ում:

— Իսկ վորեւ մեկի հետ մըցնեմ եյիր, վոր նրանք եւ քեզ պես լավ պահեն տրակտորը:

— Իհարկե, —պատասխանեց Ղուկասը: Նա պատմեց, թե ինչպես ինքը սոցմքցման մեջ եր մտել յերկու տրակտորիստների՝ Զորեւանի և Յավրույանի հետ, վորոնց տրակտորները միշտ փշանում եին և վերանորոգման գնում—իսկ իրենը՝ վհչ: Հետո նա պատմեց, թե ինչպես ինքը շարունակ գերակատարում եր ցանքսի պլանները և միշտ վարում եր յոթ—ութ հեկտար:

Ամեն ժամանակ ել սոցմքցումը յես եյի տանում և մի քանի անգամ ել նվիրատվություն եմ ստացել: Հիշում եմ,— շարունակեց իր պատմությունը Ղուկասը, մեկ որ ել, սարսափելի վարար անձրեվից հետո, լավ յեղանակներ սկսվեց, բայց արտերում դեռ ցես եր: Մենք մի բրիգադիր ունեինք Յիյան Արշակ անունով, վորի հայրը կուլակ եր և նրան արգեն քշել եյինք գյուղից: Մեկ ել եղ Արշակը մոտենում է ինձ և ասում—

— Ինչու չես վարում, յեղանակը լավ ե:

— Չի կարելի վարել,—պատասխանում եմ յես,—ցեխա:

— Կարելի յե, —պնդում ե նա:

— Չի կարելի, —աստիճանաբար բարձրացնում եմ ձայնս:

Այդպես յերկար փիճեցինք, թեև նա կարգադրում եր, բայց յես չեյի յենթարկվում և վերջի-վերջու չվարեցի:

— Այո, ընկեր, յես ճիշտ եյի, —մե տեսակ արդարանալու տոնով շարունակեց Ղուկասը: Միայն այդպիսի վերաբեր մունքով ու խնամքով իմ տրակտորը կարգին մնաց և յես իմ պլանները գերակատարեցի: Ղուկասը պատմեց և այն մասին, թե ինչպես գիշեր ժամանակով նրանց մոտ եր գալիս ընկեր Դոկուկինը կամ ընկեր Յեղիսաբարյանը:

— Ընկեր Դոկուկինը ձիու քայլվածքից անգամ հասկանում եր, թե եստեղը վոնց և վարած, —հրճվանքով ասաց Ղուկասը:

— Ղուկասն այն կոլտնտեսականներից ե, —ասում եր կոլտնտեսության նախագահը, այն տրակտորիստներից, վոր անկեղծ սրառվ և հարվածային կերպով աշխատում են բոլշեկովյան կոլտնտեսությունների և ունեվոր կոլտնտեսականների գործի համար: Նա վաստակել ե իր փոքրիկ ընտանիքով 417 աշխատ:

— Մենք վոչ մի ժամանակ եսքան բերքի տեր չենք յեղել, ինչպես հիմա, —մեծ հրճվանքով ասում եր Ղուկասի մայրը, վորը հիսունն անց եր արդեն և իր կյանքի ընթացքում շարունակ գեղջկուհի ե յեղել:

Ղուկասի ընտանիքը ստանում ե յերեք լրագիր:


Ղուկասը շատ սիրով եր կարդում քաղբաժնի որդան «Ենտուզիաստ»-ը, իսկ նրա փոքրիկ քույրը՝ Յերմոնուլին, վոր սովորում եր դպրոցում, կարդում եր «Լեն. վուլչատ»: Բացի այս լրակուլ լրագրից, նրանք ստանում եյին նաև ույսնական ամենամեծ «Կոմունար» լրագիրը, իսկ մայրիկի համար, փոքրիկ Յերանուհին բարձր ընթերցանություն եր կատարում:

Յես շատ գոհ մնացի Ղուկասի պատմությունից, յերբ նա ավարտեց իր պատմությունը: Մենք մնաս բարով տացինք և անցանք արհեստանոցների մյուս բաժինները նայելու: Նրանք բոլորն ել վոչ այնքան մեծ ցեխեր, եյին, վորտեղ պատրաստվում կամ վերանորոգվում եյին այս կամ այն մեքենայի փչացած մասերը: Խոսեցինք շատ բանվորների հետ, վորոնց մեծագույն մասը յերեկվա մենատնտես գյուղացիներ են: Նրանք անտրատունջ կերպով հերոսների նման, առանց մի քայլ զիջելու գասակարգային թշնամուն, քաղբաժնի բոլցեիլյան ղեկավարությամբ քայլում եյին ունեվոր կոլտնտեսային կյանք ստեղծելու մեծ պայքարի առաջին շարքերում: Նրանք այդ լավ եյին հասկացել, լավ եյին հասկանում և բոլորովին պատահական չե, վոր առաջավորների շարքն են անցել և լավ առաջարկներ են:

— Նիկոլայ Ալեքսանդրովիչ, —յես դիմեցի քաղբաժնի պետ ընկ. Դոկուկինին: Դուք ունեք արդյոք, այնպիսի ձիապաններ, վորոնք ինսամում են ձիերին այնպիսի հարազատությամբ, ինչպես Սուխարյան Ղուկասն իր տրակտորին:

— Ինչու չե, —պատասխանեց նա ինձ ղեկավարի հատուկ գոհունակությամբ, յերբ առանձնապես հետաքրքրվում ես նրա աշխատանքի պառուղներով:

Յես ծանոթացա յերկու ձիապանների հետ: Ներայցից Ակը յերիտաւարդ եր, իսկ մյուսը հասկավոր: Խոանիք նրանց մասին, առանձին առանձին:



Ահա նա, Բայան Թեվողորոսը, 27 տարեկան, հարվածային գործունյա մի յերիտասարդ ե: Թեվողորոսը 1925 թվից սկսել ե ապրել իր սեփական տնտեսության մշակությամբ: 1930 թվին կոլտնտեսություն գալով, իր հետ բերել ե յերկու ձիեր, վոր նա վաստակել եր խորհրդային իշխանության ժամանակ:

— Յես շատ եմ սիրում ձիերին, հենց դրա համար ել մենք մեր յերկու յեզները ծախսեցնք և ձիեր առանք: Զեմ սխալվի, յեթե ասեմ, վոր իմ ձիերը դյուզի ձիերի մեջ ամենալավերիցն եյին,—պատմում ե Թեվողորոսը:

Բայանը կոլտնտեսություն ե մտել 1930 թվին: Հետագայում, յերբ կոլտնտեսությունից դուրս յեկան, նա յել դուրս յեկավ, բայց շուտով դարձյալ վերապարձավ կոլտնտեսություն:

— Յես շատ ելի ուզում կոլտնտեսության ձիապան լինել,—ասում ե նա, բայց չեյին նշանակում: Զահել ե, ասում եյին, ձիապանն ստաժավոր, հասակավոր պիտի լինի:

Բայց շուտով փոխվում ե դրությունը: Յեվ ահա սովորական որերից մեկում քաղբաժնի պետի ոգնական, ընկեր Յեղիազարյանը, իր հերթական աշխատանքի կարգով դաշտ ե դուրս գալիս: Նա, — պատմում ե Բայանը, — մյուս աշխատանքներ նայելուց հետո մոտեցավ նաև իմ ձիերին, յես արդեն ձիերը արձակել ու նախաճաշում եյին:

- Ես ում ձիերն են, — հարցրեց նա բրիգադիրից:
- Բայան Թեվողորոսի, — պատասխանում ե բրիգադիրը:
- Իսկ նա ինչ աշխատանք ե կատարում:
- Շարքացանի վրա յե աշխատում:

Ընկեր Յեղիազարյանը գնաց: Մենք շարունակեցինք մեր աշխատանքը: Մյուս որ քաղբաժնից թուղթ ստացա: Քաղբաժնինը առաջարկում ե ինձ ընդունել ձիապանի պարտականությունը: Յես շատ ու շատ ուրախացա, յերբ անցա այդ աշխատանքին և մինչև եսոր ել աշխատում եմ:

Ինձ հանձնեցին ինամելու 11-ձի, դրանցից շատերն արգեն հալից ընկած եյին, բայց մինչև քաղի ժամանակը այդ ձիերին յես այնպես խնամեցի, վոր հիմա յել ամենալավ ձիերն են: Յես գիշեր ցերեկ գոմից դուրս չեյի գալիս, մի խոսքով, շարունակ ձիերի մոտ եյի լինում: Առաջին շըջանում ձիերի կերը կոշտ եր: Այդպիսի կեր ձիերին չեր կարելի տալ, դրա համար ել յես կերը թրջում, կակղեցնում, մանրում եյի և նոր տալիս ձիերին: Բացի այդ, յես թույլ չեյի տալիս, վոր ձիերին չարչարեն և տեղի-անտեղի բանեցնեն:

— Զմռան սկզբին եր, բրիգադիրը կարգադրել եր շատ կարեցը գործի համար մի ձի հանձնել, իսկ ձիերը նալած չելին: Յես չհամաձայնվեցի ձին տալ և սկսեցի աղմուկ բարձրացնել՝ մինչև գարբին չկանչեցին և ձին չնալեցին: Հիմի ինձ տվել են ևս յերկու ձի, եղ ձիերն ել շուտով կարգի կգան: Իմ լավ աշխատանքի համար յես նվեր և հարվածային գրքույշ ստացա: Յես հարվածային եմ, — իր համեստության հակառակ հպարտությամբ ասաց Թեվողորոսը:

— Իմ ընտանիքը բաղկացած ե 9 հոգուց: Աշխատում ենք միայն յերեքով յեվ ամենահասակավոր աշխատողը յես եմ: Վաստակել ենք մոտ 500-ից ավելի աշխատը: Ստացած բերքը լրիվ բավարարում ե մեզ, ավելցուկի մասին խոսք լինել չի կարող: Հաճախ ինքս ինձ միտք եմ անում, ինչ կլիներ մեր որը այդպիսի մեծ ընտանիքով, յեթե կոլխոզը չլիներ: Զգիտեմ թե վոնց պիտի ապրեյինք: Առանց այդ ել մայրս պատմում ե, ասենք յես ել եմ հիշում, գեռ հայրս սաղ եր և մեր ընտանիքը այնքան ել մեծ չեր, մենք այսքան հաց վոչ մի ժամանակ չենք ունեցել, իսկ այսպիսի ապրուստ առավել ես: Բայց մի բան կուզեյի ասել: Հնայած նրան, վոր յես իմ ձիերի ինամեքը լավ եմ կատարում, այնուամենայնիվ, ինձ թվում ե, ավելի ձիշտ համոզված եմ, վոր մեր ուայոնի ամենալավ ձիապահը՝ Շլորյան Խաչերեն ե: Նա մեր կոլխոզից չե, «այլ» Շերողայեվի անվան կոլխոզից ե: Յես համոզված եմ, յեթե «Շերողայեվ» կոլխոզը Շլորյանի պես շատ կոլխոզնիկներ ունենար, ամենառաջավոր կոլխոզը կլիներ:

Շուտով յես ծանոթացա նաև Շլորյան Խաչերենի հետ: Նա գյուղում չեր լինում, այլ շարունակ ապրում եր իր ձիերի մոտ, բրիգադի փոքրիկ կալվածքում: Բրիգադի իջեվանը գյուղից 20 վերստ հեռու յեր: Տնտեսության նախագահը կարգադրեց մեզ սահնակ տալ և յերբ սահնակը պատրաստ եր, յես յեվ կուսբջիչի քարտուղար ընկեր Յեղյան մեկնեցինք բրիգադ: Առավոտյան սառը քամին, այսպես ասած, քիթ եր կտրում: Ցուրտ եր:

— Շնուտ կհամնենք, հարցնում եմ յես քարտուղարին, վորն ինձ պես կծկծել եր իր աշնանային վերարկույի մեջ և վոչ մի ցանկություն չուներ խոսելու:

— Քիչ հետո, — պատասխանեց նա և լոեց: Յես նկատեցի, վոր նա ինձնից ավելի յե մրտում և այլեվս չանհանգստացրի նրան իմ հարցերով: «Քիչ հետո», մասձում եյի ինքս ինձ և տաքանալու մի ուժեղ ցանկությամբ հրճվում, բայց այդ բովե-

յից հետո մենք համարյա թե մեկ ժամ ճանապարհ եյլինք գնում: Դաշտում, հաճախակի խմբերով յերեսում եյին սպիտակ գագաթներով ցցված խոտի դեղեր, վորոնք պատկանում եյին «Շերողայեվ» կոլտնտեսության: Դրանից ել ավելի շատ նրանք գյուղ եյին տարեր: Սակայն խոտի տեղափոխության աշխատանքները դեռ չեյին դադարել, ճանապարհին մենք հանդիպեցինք 10-ից ավելի սայլերի, վորոնք խոտ եյին տեղափոխում:

Դաշտում բավական լայն տարածություններով սեվին եյին տալիս արեվադաղի, կուկուրուզի ցողուններոց դեռ չմաքրած արտերը: Դա յել «Շերողայեվ» կոլտնտեսությանն ե. կոլտնտեսությունն այդ ճակատում հետ եր մնացել: Հետո յես իմացա, վոր արտերը մոլախոտերից մաքրելու շեֆությունը վերցրել ե Մյասնիկյանի ուայոնի կոմսոմոլը, բայց նա յել հետ եր մնացել: Հենց այդ որերին տեղի ունեցավ կոմսոմոլի 2-րդ պիենումը, վորտեղ առանձնապես դրված եր դաշտերը մոլախոտերից մաքրելու հարցը: Նրանք վորոշել եյին մինչև 17-րդ կուսհամագումարը այդ ճեղքվածքը լիկվիդացիայի յենթարկել:

Մենք արդեն գտնվում եյինք բրիգադում, շրջել ու ծանոթացել եյինք բրիգադի կալվածքին: Դա մի փոքրիկ ձորակի մեջ ընկած վոչ այնքան մեծ ու գրավիչ շինություններով շրջապատված բակ եր: Առաջին ծանոթության վայրը ձիերի գոմն եր, վորտեղ բոլորից շատ աչքի զարնվեց վեց հատ սե ու կարմիր հղի ձիեր, վորոնց նկատմամբ Խաչերեսը առանձին խնամք եր տանում:

— Վենց կարելի յե անուշադիր լինել դեպի ես ձիերը, ասաց Խաչերեսը, չե՞ վոր գարնանը մեր կոլխոզը կհարստանա վեց նոր ձիերով ևս: Բացի այդ, հղի ձիերը ծնելուց հետո գործի պիտի անցնեն:

Գոմը բավականին լայն ու ընդարձակ եր: Մաքուր և հարկավորին չափ լուսավոր: Որեկան յերկու անդամ կատարվում եր գլխավոր մաքրում, և բացի այդ, գուղքնթացաբար կատարում եյին նաև ընթացիկ մաքրելու աշխատանքը: Գոմը տաք եր:

Բացի գոմից, մենք ծանոթացանք և յերկու փոքր շենքերի հետ:

— Սրանք ել մեր սերմի ամբարներն են,— ասաց քարտուղարը:

Մենք մտանք այն խրճիթը, վորտեղում զիշերում եր Խաչերեսը իր մի քանի ընկերների հետ: Խրճիթը շատ փոքր եր և բաղկացած եր յերկու փոքրիկ սենյակներից: Այսուղ եյին

Նրանք պատրաստում իրենց ճաշը. ձմռան եղ ցուրտ որերին այստեղ եյին նրանք անցկացնում իրենց հանգստի ժամերը: Յերք մենք ներս մտանք, մի քանի յերիտասարդներ կարդում եյին «Ենուակիպիաստի» վերջին համարը: Յես ծանոթացա բոլորի հետ ու թեթեվ զրուցի բոնվեցի: Նրանցից շատերն աշխատում եյին դաշտում և մաքրում եյին դաշտերը մոլախոտերից: Նրանք յեկել եյին հանգստանալու յեվ քիչ ել տաքանալու:

— Իսկ ինչպես եք աշխատում այդ ցրտին,— հարցը յես:

— Վոչինչ, ընկեր,— ասաց նրանցից մեկը ծիծաղը գեմքին, աշխատանքի մեջ ցուրտար չես զգում: Մեկ ել, ինչ արած, մեղավորը մենք ենք: Տաք յեղանակներին կարգին չաշխատեցինք, վոր վերջացնենք, հիմի մեր մեղքը պարտավոր ենք քաշել: Չե վոր եզուց գարուն ե, ցանել ե հարկավոր:

Նրանցից մեկը, վորը մի կողմ եր քաշվել ու կպել վառարանի պատին, դժոխ գեմքով մեզ մոտեցավ:

— Վոչ ընկեր, յես, համաձայն չեմ, ես ցրտին վոչ վոք չի համաձայնվի աշխատել. մեկել ի՞նչ ոգուտ, վոր իզուր տեղը ժամանակ ենք կորցնում և հարկավոր յեղածին պես կեսն ել չենք անում: Չե, չե, հարկավոր ե բողոքել, այսպես չի կարելի: Յես ասում եմ, իսկ տղաներն ինձ չեն լսում:

— Եղ գու ես, վոր հարկավոր աշխատանքի կեսն ես կատարում,— շտապեց պատասխանել առաջին խոսողը: Աշխատել հարկավոր ե, և մենք աշխատում ենք: Իսկ դու, քո մասին ի՞նչ խոսք, ամառն ել կարգին չեյիր աշխատում:

Այդ վեճը գուցե յերկար տևեր, յեթե քարտուղարը շշտապեր գյուղ վերադառնալ: Ինչպես յերեսում եր, նրանք հաճախ եյին վիճում իրար հետ, բայց և այնպես աշխատում եյին: Նորեկ մարդու ներկայությունն առիթ յեղավ վերսկսելու նրանց համար մի շատ ծանոթ վիճաբանություն:

Յես սկսեցի ծանոթանալ Խաչերեսի գործերի հետ:

Շլորյան Խաչերես: 42 տարեկան, միջին կազմվածքի տեր մի մարդ եր: Նա միջակ ե յեղեր, յերբ մտել ե կոլտնտեսություն: Կոլտնտեսություն մտած առաջին իսկ որից, բրիգադի ձիապան եր: Նա իր անհատական տնտեսության մեջ ունեցել եր ձիեր, վորն իհարկե հանձնել ե կոլտնտեսության: Են ժամանակ ել նրա ձիերը գյուղում տուաջիններից եյին:

— Իմ խնամքին ե հանձնված 26 ձի: Յերեք տարի շարունակ յես զբաղվում եմ եղ գործով և մինչեւ եսոր վոչ մի ձիու բան չի պատահել: Իս ձիերը միշտ ժամանակին գնացել

են աշխատանքի: Միայն անցյալ տարի իմ ձիերից մեկը սատկեց, վորը վոչ մի կերպ չեմ կարող մոռանալ, — պատմում եր Խաչերեար:

— Գարնան եր, մեկել հանկարծ սկսեց մի սարսափելի անձրեվոտ, ձյունախառն ցուրտ յեղանակ: Այս ժամանակ այս շինությունները չկային, հարկավոր եր ձիերին գյուղ փախցնել յեվ ազատել ցրտից: Այդպես ել արեցինք: Ճանապարհին ձիերից մեկը հիվանդացել եր. մինչև վոր ինձ խաբար բերեցին, մինչև յես հասա, ձին արդեն սատկել եր: Շատ բարկացա, բայց դեինչ կարող ես անել, յերբ ձին ձեռքից զնացել եր արդեն: Դրանից հետո յես ել ավելի սկսեցի լավ նայել ձիերին: Ուրիշ բրիգադներում գարնանը շատ ձիեր սատկեցին, իսկ ինձ մոտ դրությունը շատ լավ ե:

Ինձ մոտ հաճախ են գալիս մեր կոլխոզի ղեկավարները, գալիս են ծանոթանում, խոսում, ցուցմունքներ տալիս: Յես այնքան ել աչքս նրանց ճամբին չեմ պահում, նրանք ել իրենց գործն ունեն, խոմ պարապ չեն:

Քաղբաժինն այս տարի ինձ ուղարկեց ձիապանների յերկրային համագումարին: Այստեղից յես շատ նորություններ բերեցի ինձ հետ և պատմեցի իմ ձիապան ընկերներին: Յես մի քանի անգամ լավ աշխատանքիս համար նվեր եմ ստացել: Մեկ անգամ 4 մետր կտոր ստացա: Լավ կտոր եր, կնոջն համար դերյա կարել տվեցի, տոն որերին հագնում, շորորվելով թատրոն եր գնում: Հիմի մեր բրիգադը մրցում ե «Սոց-փարոս» կոլխոզի 5-րդ բրիգադի հետ: Յես, վորպես ձիապան, շատ լավ եմ հասկանում, թե ինչ դեր ունեմ կատարելու: Խոսք եմ տվել, վոր իմ բրիգադին ամոթով չթողնեմ և գարնանը աշխատանքի կուղարկեմ առույգ և առողջ ձիեր:

Յես ընտանիքից այնքան ել մեծ չեմ, վաստակել եմ 450 աշխոր: Ճիշտ ե, մեր կոլխոզում աշխորին ավելի քիչ ե բերք համար, քան թե, որինակի համար, մի քանի ուրիշ կոլխոզներում, համա իմ ստացած բերքը ինձ բարկան ե: Վոչինչ, գալիք տարի հույսով եմ, վոր ուրիշներից հետ չենք մնա:

Խաչերեսի դաշտային խրճիթը շատ տաք եր, վառարանը զի վառվում եր և մեծ չուգունե կաթսայի մեջ արդեն փթփըթում եր դեղին դգումի ճաշը:

Մենք վերադառնք կոլխոզ:  
— Ե՞ս, հարգելի ընկեր, ափսոս, վոր դուք շատ կարճ ժամանակով հանդիպեցիք մեզ մոտ, — շարունակեց իր զրույցը Նիկոլայ Ալեքսանդրովիչ Դոկուկինը, վորն որվա աշխատանքից հոգ-

նած մի պահ հանգստանալ եր ուզում, այն ել յես խլեցի նրանից:

— Ավասոս, սակայն հույսով եմ, վոր սա վերջինը չի լինի: Յեթե դուք իմանայիք թե ինչպիսի հերոսությամբ աշխատեցին մեր փոքրիկ պիոներները: Թե ինչպիսի հերոսությամբ, քաջությամբ պաշտպանեցին նրանք կոլխոզային դաշտերի հացը, չտեսնված, չլսված հերոսներ եյին այդ փոքրիկ պիոներները: Նրանցից յերկուսը՝ Բալասանյանը և Սարգսյանը համամիութենական կարմիր տախտակին են արժանացել:

Մեղնից ավելի շուտ գրավեցին նրանք պատվի այդ շքանշը: Խսկապես վոր նրանք պիոներներ են:

## Զ Ա Ր Դ Ա Ր Ո

Տերկար խոսակցությունից հետո, յես ուղղակի մի հարց տվի նրան:

— Հիմի քո կոլխոզը շատ լավ է, բոլորը դովում են, բոլորը խոսում են նրա մասին։ Այդ նշանակում է, վոր քո հաջողությունները ինքնամփոփ չեն մնացել, նրանք տարածվել են ամեն տեղ, ամեն վոք կարգացել լսել ե այդ մասին։ Իսկ վորմանք ել ոգտանքործել են այդ հաջողությունների փորձն ու իրանք ել հաղթանակով են զուրս յեկել։

Հիմի ինձ հետաքրքիր ե, ինչ ես մտածում դու հետապայի մասին, ինչ ինդիքներ են, վոր քեզ մտազբաղ են դարձնում, յեվ ինչ ես մտադիր անելու, վոր ել ավելի զորանա ու աճի կոլխոզը։

Զարդարը մի պահ լոեց։ Իր կարձիկ ու թմբլիկ մատները թաղեց ճակատի վրա մի փունջ հասկերի պես խոնարհած թուխ մազերի մեջ։ Հետո կապուտակ աչքերը կգոցելով հառեց ձեռքիս գրչին, ձեռքի մի արագ շարժումով թուխ մազերի փունջը հետ շփեց, թեթեվակի վրաս նայեց և մի պահ զսպելով շնչառությունը, կապարի պես ճնշող ծանրությամբ, պատասխանեց։

— Գիտեք ինչ, ըսկեր, յես շատ հաճախ եմ այդ առթիվ մտածել։ Ինչ ել վոր անելիս լինեմ, ուր ել վոր դնալիս լինեմ, եղ հարցը շարունակ շըջում ե ինձ հետ, կարծես սովերի պես հետեւում ե ինձ։

Ասենք թե՝ հենց որինակի համար՝ ավարտեցինք աշնանացնը, Իսկ հետո ինչ... Դուք վոր հիշեցրիք ինձ այդ բոլորը, ապա թույլ տվեք լինել ձեղ հետ անկեղծ, գուցե ավելորդ կինի այդ, բայց յես ուզում եմ, վոր պատմած լինեմ։

— Մեծ ուրախությամբ լսում եմ ձեզ, — ասացի յես։

— Քանի տարեկան կլինեմ, անսպասելի կերպով հարցրեց նա։

— Քսանչորս, նույնքան անսպասելի յեվ ակամա տացի յես։

— Այ, տհմնում եք, դուք չսխալվեցիք, յեվ վորովհետեւ դուք չսխալվեցիք, հենց եղ տեղից յես կսկսեմ իմ պատմությունը։

— Մենք մի ձի ունեյինք յեվ ուրիշ վոչինչ։ Մեր ամբողջ վար ու ցանքսն եղ մի ձին եր անում։ Նրա մի աչքը քոռ եր, մի վոտք կաղ, և հետո եղ խեղճ ձիու հենց շնոքակոթին կրիայի պես նստել եր մի անբուժելի վերք։ Հաճախ այդ վերքը ծածկվում եր կաշվի բարակ թաղանթով, և հայրս շարունակ կապում եր այդ վերքը, վրան դնելով տաք կավի մի գունդ, հետո բութե ջլեր, կամ մի ուրիշ փափուկ բան և այդպես ոգտագործում։ Զեղավ մի տարի, վոր մեր հացը հերիք աներ, հենց զրա համար ել հայրս ու յեղբայրս հաճախ աշխատում եյին ուրիշների մոտ։

Յես գեռ փոքր եյի, սովորում եյի դպրոցում։ Շատ հաճախ շաբաթներով բացակայում եյի դասերից։ Դպրոցի տեսուչը թոշակ եր պահանջում, իսկ հայրս հնարավորություն չեր ունենում վճարելու, զրա համար ել մինչև թոշակը չեյինք տանում, ինձ դպրոց չեյին թողնում։ Շուտով մեծ քրոջս մարդու տարան։ Մայրս հիվանդացավ։ Տանն արող, դրող չկար, յեթե վոչինչ շլիներ անելու, ապա հարկավոր եր գոնե մի գդալ տաք շուր պատրաստելու՝ ուշ յերեկոյան աշխատանքից քաղցած վերադարձող հօրս յեվ յեղբօրս համար։ Հարկավոր եր հիվանդ մորս ոգներ, ինամեր։

Այդպիսի վիճակում սովորեն ավելի անհնար դարձավ։ Յես դպրոցից դուրս յեկա։

Զարդարը մի տեսակ գունատվեց, լցվեց ներքին թախիծով, նրա վարդուն, ժապող աչքերը ցած խոնարհվեցին։

— Խեղճ մայր, նա շուտով մեռավ, — մի խոր հառաջով շարունակեց նա։ Սյունեան դպրոցի դոները բոլորովին փակվեցին իմ առաջ։ Յեվ այդպես, իմ գեռ չակած ուսումը թերի մնաց։ Այս ժամանակ յես 12 տարեկան եյի։

Լավ թե վատ տարիներն անցան, գնացին։ Յես աճեցի, մեծացա։ Հիշում եմ 1924 թվին եր։

Մեր գյուղից քիչ հեռու, քաղաքի մոտ, 22 թվից յես կարկազմակերպված գյուղատնտնեսական կումոննա։ Մեր պայմաններում, տասնուհինգ տարեկան աղջիկը մարդու տալու բան եր։

Այսպես վոր յես այսպիսի հասակում ընդունակ եյի սեփական խելքով մտածելու ապագայի մասին:

Ամուսնանալ, իհարկե, չեյի ցանկանում և այդպես գլորել եմ արդեն քանանչորս տարի:

Կոմունայում ապրող մեր բարեկամներից յես հաճախ լսում եյի, վոր ենտեղ լավ ե, հետո չե վոր մենք ապրուստ ստեղծելու միջոց չունեյինք:

Մեկ որ այդ առթիվ յեղբօրս հետ խոսք բաց արի. պարզ վեց, վոր նա յել նույն միտքն ունի:

Մենք վորոշեցինք թողնել գյուղը և տեղափոխվել կոմունա: Հարցը մեծամասնությամբ վորոշված եր, հարկավոր եր խոսել հայրիկի հետ:

— Հայրիկ, — մեկ որ ընթրիքի ժամանակ յես դիմեցի նրան:

— Ի՞նչ կա, բալա ջան, փաղաքաշական տոնով հարցրեց նա: — Հայրիկ, մենք վորոշել ենք...  
— Նու, ի՞նչ եք վորոշել.

Այդ պահին մեջ բնկավ յեղբայրու:

— Վորոշումս վորն ե, ենա վոր վաղը, մյուս որը, մենք գնալու յենք կոմունա: Բավական է ինչքան եսպես ապրեցինք, ել չենք կարող:

Հայրս լոեց: Հաստ, կոշտացած ձեռքերով շոյելով իր սև թափուտ բեխերը, մեկ ինձ, մեկ յեղբօրս նայելով, ասաց:

— Ուրեմն այդպես... իսկ ի՞նչ որենքով ինձ, արգելել եք ձեր վորոշմանը մասնակից լինելու իրավունքից:

Մյս խոսքերն ասելիս, նա մի թեթեվ ժպտաց, ապա ձեռքի մի վճռական շարժումով վեր կացավ տեղից: Ինչպես յերեփում եր, մեր վորոշման այդպիսի անսպասելի լուրը վրդովեց նրան, նա հուզվեց:

— Վոչ, յես վոտք չեմ դնի կոմունա, — նա ընդհատեց իր խոսքը, հարկավոր եր հայրական խոսք ասել և մեր մասին: Նա լոեց, մի պահ մտախոհ դարձավ ու հանկարծ դիմեց մեզ.

— Փիտեք ի՞նչ... նա նորից լոեց, ապա լուս, գլուխը քարած կրծքին, առանց մեզ վրա նայելու ասաց:

— Զեր գործն ե, յեթե ուզում եք, դնացեք...

Հատ չանցավ այդ որից: Մեկ որ քույր ու յեղբայր, շալակած մեր կիսամաշանկողիները, մեկնեցինք կոմունա:

Մենք արդեն աշխատում եյինք կոմունայում: Այդ որվանից ամիսներ եյին անցել: Յես ապրում եյի բրոջս մոտ, իսկ յեղբայր՝ առանձին մի փոքրիկ սենյակում: Մենյակը նախ մութ եր,

վորի յերկու փոքրիկ լուսամուտները վատ եյին լուսավորում և յերկրորդ՝ խոնագ եր, իսկ ձմեռը ցուրտ:

Յերեկո յեր, մեկ ել հանկարծ մեկը դուռը բաղխեց ու ներս մտավ, այդ հայրս եր: Ինչպես յերեկում եր, նա փոշմանել եր:

— Առանց հարազատ վորդիների ծանր ե կյանքը, — ասաց նա:

Հորս գալուց հետո արդեն անցել եր մի քանի ամիս: Յորենը ծեծելու ժամանակ եր, թե վերջացել եր, լավ չեմ հիշում: Չոգ որերից մեկն եր: Կոմունայում յեռում եր մի տեսակ անսովոր կյանք: Ամեն տեղ արեն եր, ամեն ինչ արեի վառ ջերմով եր շնչում:

Եստեղ Զարդարը մե բոպե լոեց: Կարծես նա ուզում եր յրված մտքերը հավաքել: Ծովի պես կապույտ աչքերի վրա, մութ ամպերի նման, կուտակվել յին յերկար ու սև հոնքերը: Զախ արմուկով հենվեց ծնկան վրա և յերեսն ափերի մեջ առնելով, ասաց.

— Մեր «Աշխատանք» կոմունայից քիչ հասու, կուլակներն իրենց համար մշակում եյին կապալառու հողեր:

Կուլակ Բառաշաններն իրենց բերքը տեղափոխում եյին գյուղ: Կոմունայի կողքից ձգվող մեծ ճանապարհով հաճախ անցնում եր նրանց սայլերի քարավանը, և գյուղը լցվում եր աշառների զանգուլակների զնդ-զնդցուցի:

Յերեխանները կոմունայից խմբով վազում եյին դեպի մեծ ճանապարհը: Փոքրիկ յեզները տեսնելով չարաճճի յերեխաններին, իրենք ել կարծես ուրախությունից թոշկոտալ եյին ուզում, բայց ծանր լուծը սղում եր նրանց վիզը — և առաջ հրում: Յերեխաններին շան եր դուր գալիս փոքրիկ յեզների գույնգույն զնդաճեկ զանգակները: Յերեխանները փորձում են արձակել յեզների վզից գոնե մի փոքրիկ զանդակ: — Դե, յերեխաններ են ելի, ի՞նչ կարդ ես անել: Բառաշանները նկատելով այդ, հարձակվում են յերեխանների վրա: Յերեխաններից շատերը փախչում են:

Հորյեղբորս տղաներից մեկը բռնվում ե: Բառաշաններն սկսում են ծեծել նրան: իսկ յերբ յերեխան ճիկ ե անսում աղատվել, Բառաշանների փոքրիկ յեղբարը յերկաթե յեղանով ծակում ե նրա փորը:

Այդ լուրը կրակի պես գյուղ հասավ: Կոմունարները, վորդպահած եյին կալատեղում, իսկույն շտապում են ոգնության: Բառաշաններն սկսում են փախչել: Հայրս ավելի կարճ ճանապարհով աշխատում ե կտրել նրանց առաջը և դուրս գալով մեծ ճամբի վրա գոռում ե:

— Ե՞յ, շուն շան վորդիք, կացեք, ուր եք փախչում, յերեխային սպանեցիք...

— Մարգիկ, սրա յախիցն ել հարկավոր ե դար, — բղավում ե Բառաշամների մեծ յեղբայրը:

Նրանց խումբը հարձակում ե հորս վրա և մի ակնթարթ տեղի յե ունենում անհավասար կատաղի կոփի:

Մեկ ել Բառաշամն Սերգեյը, գաղտագողի, լծկան յերկաթե սամիյով հորս յետեից մի ուժեղ հարված ե հասցնում զիխին: Նա վայր ե ընկնում: Յերկրորդ հարվածն ամբողջովին հանգստացնում ե նրան:

— Այս, ընկեր, մի տեսակ կոշտացած, տղամարդային ձայնով ասաց Զարդարը: Հորս սպանեցին... Նա մեռավ: Իսկ յերեխային շտապ տեղափողեցին հիվանդանոց ու բժշկեցին:

Բառաշամներին դատի տվեցին ու պատժեցին:

Ժամանակն սկսեց սահել, անցկացավ, քույր ու յեղբայր առանց ծնողների շարունակեցինք աշխատել կոմունայում:

Կոմունայի կյանքն ինձ շատ դուր յեկավ, առանձնապես կոմսոմոլը: Եստեղ յես շատ հաճախ ելի ներկա լինում:

Ցես շատ սիրեցի կոմսոմոլներին: Նրանք աշխատում եյին, վիճում, ժողովներ անում, հազար ու մի հարցեր լուծում, նրանց մոտ կյանքը մի տեսակ յեռում եր:

Բավական չե լինել կոմունար, հարկավոր ե և կոմսոմոլ զրկել — վորոշեցի յես:

Քույրս իմադավ իմ այդ մտադրությունը և սկսեց զիխս ձառեր կարգավ: Զգիտեմ ինչու, ըստ յերեխույթին նա յել չզիտեր թե ինչու, բայց հակառակ եր, վոր յես կոմսոմոլի շարքերը մասնեյի:

— Լկումի ես ուզում, համար խոսքերից այսքանը լավ եմ հիշում: Խեղձ քույր, նա վորքան աղոտ գաղտափար ուներ մեր լենինցն կոմսոմոլի մասին: Ցես հետ չկանգնեցի իմ վորոշումից: Քույրս ել համառ եր, ինչպես յերեխում եր նա յել վորոշել եր հետ չկանգնել իր վորոշումից:

Ցես մտա կոմսոմոլի շարքերը: Քույրս ինձ դուրս արեց տանից: Մեկ ամսից ավելի յես ընկերներիս մոտ ելի անցկացնում զիշերները և քրոջս մոտ այլևս չվերադարձաւ: Յերկու յերկար ու ծիգ տարիներ մի որվա պես թուան, գնացին: Յեղբորս ընակարանային պայմաները գեռ նույնն եյին: Նա մի տեսակ փոխվել եր: Եղ տարիներն առհասարակ կոմունայի գժվարին տարիներն եյին: Հարկավոր եր կոմունան կարգի բերել Պահանջվում եր նոր ու նոր ծախքեր: Հարկավոր եր շինու-

թյուններ կառուցել: Կոմունարները պետք ե որինակելի ապրեցին: Ես բոլորը յեղբօրս վրա մի տեսակ բացասական եր աղում: Մեկ որ կոմունայի ընդհանուր ժողովը վարուեց:

«...Բոլոր կոմունարները պարտավոր են ունեցած իրենց տներն ու ոժանդակ շինությունները կամ տեղափոխել կամ ծախել և գումարը մուծել կոմունայի ընդհանուր զրամարկը»:

— Ես վորոշումը յեղբօրս դուրս չեկավ: Ինչպես յերեվում եր, նա դեռ չեր հավատում կոմունայի կայսւնության: Նրան թվում երթե կգա մի որ, վոր նա նորից կվերադառնա հայրենական խրճիթը: Նա ավելի հետաղիմական եր և մի տեսակ մանը սեփականատիրական հոգեբանություն ուներ:

— Իմ պապենական ոջախի ճրագը միշտ վառ պիտի մնա, — ասում եր նա, — այս, և հենց եղ խրճիթում: Յես համաձայն չեմ, իմ տները յես չեմ ծախի, վոչ, յես նրա համար կոմունա չեկա, վոր թաց ու խոնավ խրճիթներում քարշ գամ, հետո յել իմ սեփական տները ձեռքից բաց թողնեմ:

Ինձ համար վիրավորական եր յեղբօրս այդպիսի վարմունքը.

— Իսկ պապենական տները պալատ ի՞ն, — ասացի յես, — մութ ու խոնավ չե՞ն:

— Հետո ի՞նչ, — զայրացած պատասխանեց նա, բայց չե վոր եղ իմ պապենական, հայրական տունն ե, սեփականը:

— Իսկ կոմունայինը ի՞նչ ե, իմը կամ քոնը չե, ուրիշներինն ե — պատասխանեցի յես:

Չեղավ, ինչպես յերեսում եր, նա մի տեսակ լքվել եր: Խորհուրդն ու համոզելը նշանակություն չունեցավ: Նա հեռացավ կոմունայից և ինչպես յերեսց, ինձ ել եր ուզում իր հետ քաշել, բայց չգնացի: Ընդհակառակը, յես ուզեցի համոզել նրան, բայց չկարողացաւ: Մի տարի չանցավ այդ որից, նա վորշմանեց իր արած քայլի համար ե, նորից վերադարձ կոմունա:

Հետո ինձ համար սկսեց աշխատանքի մի ուրիշ շրջան: Նախ ինձ առաջ քաշեցին կոմունայի սեղանատան վարիչ, հետո 1928 թվին — ռայալինսկերբյուրոյի նախագահ, վորի համար ուզարկեցին Տուապսե կուրսեր, հետո ելի ուրիշ տնտեսական աշխատանքների մինչև 1933 թիվը: 1929 թ. յես դիմում տվեցի և անցա կուսակցության շարքերը: 1933 թիվի մարտ ամսին ինձ նշանակեցին «Հեղափոխության ալիք» կոլխոզի կուսակցի ջիջի քարտուղար, հենց եղ ժամանակ մեր մեքենատրակտորային կայանում կաղմակերպվեց քաղբաժին:



Կուսքջի Էարտուղարը ըմբ. Զարդար Խարախաշյան

**ԶԱՐԴԱՐ**, ահա այն անունը, վոր բերնից բերան և անցնում ամբողջ ռայոնում: Նրան բոլորը գիտեն, բոլորը՝ ձիապանը վորակի տեսուչը, բերքի պաշտպան փոքրիկ պիոները, տրակտորիստը, բոլորը, բոլորը: Զարդարն այն պարծանք ու հպարտությունն է, վորով յերգում կուտի անգամ Մուքել բարին: Նույնիսկ քաղաքամի պետք մեծ հարցանքով և վերաբերվում Զարդարի հետ, վորի անունը հոչակված և ուղարկվում:

— Ունեվոր կյանքի համար մղվող պայքարում Զարդարը և նրա բջիջն այն առաջավորներն են, վորոնցից ուղղությունն և վերցնում ամբողջ ռայոնը: Յես չզիտեմ թե ինչպիսի գույներ ու ներկեր են պետք նրան նկարելու համար, — ասում եր ընկ. Դոկուկինը:

Նրա աչքերում պարզ կարելի յեր կարդալ, ավելի պարզ քան այս իմ գրքում, այն կարոտանքի, վոգեվորության հուգմունքը, յերք նա խոսում եր Զարդարի մասին:

— Եդ մեր զարդն ե, — շարունակեց ընկ. Դոկուկինը, մեր քաղաքամի, կոլխոզնիկների, մեր ամբողջ ռայոնի զարդը: Նրան սիրում ե ամեն մի կոլխոզնիկ: Շատ անգամ ե նրա նկարը թերթում տպվել: Կոլխոզնիկները նրա նկարն իրենց տան անբաժանելի զարդերից մեկն են հաշվում: Դժվար, շատ զբժար ե գրիչով կամ վրձիններով նկարել իսկական Զարդարին: Բայց այդ փաստ ե:

\* \*

Գարուն ե: Արդեն սեվին են տալիս արտերը: Վախկոանապատակի նման, դեռ տեղ-տեղ կծկված, կուչ են յեկել ձյունի գորշացած կտորները:

Վար ու ցանքսի որեր են: Կոլխոզում մի տեսակ իրարանցում, մի տեսակ սպասողական անհամբեր դրություն եր: Շատերի աչքից զիշերվա քումն ել ե կարվել: Եստեղ-ենտեղ, պատերի տակ, տներում, փողոցներում, քասային անկազմակերպ հավաքներում փսփսում են, խոսում: Բայց չնայած այդ բոլորին վոչինչ տեղիցը չի շարժվում — ինչ վոր անգործություն և նկատվում: Կոլխոզի զեկավարությունը ՄՏԿ ի հետ զեռ համաձայնություն չի կնքել:

— Որերն անցնում են, ընկեր նախագահ:

— Հարկավոր ե գութանները, լծկանը, կարգի բերել ընկեր բրիգադիր, — ներքին հուզմունքով դիմում են կոլխոզնիկները բրիգադիր Սարաբաջանին:

— Վոչինչ, շտապելու կարիք չկա: Հետո յել մեր եռ փթած գութաններով ինչ կարող ենք անել, հարկավոր ե տրակտոր, մաշին... իսկ ՄՏԿ-ն դեռ չի համաձայնվել:

Այսպես հանգիստ եր կոլխոզի զեկավարությունը:

— Յերեվում եր, վոր գործը հաջող = մեր ցանկացած ճամբով չի գնում, — ասում եր կոլտնտեսականներից մեկը:

Բջիջին հարկավոր եր տեղիցը շարժվել, բայց ինչպես յերեւալում եր, ենտեղ ել գրությունը մեծահոգի հանգստությամբ եր շնչում:

— Մայկոմից գերեկախվ չկա, — ասում եր քարտուղարը, կոլխոզի նախագահը լավ գիտի իր գործը:

Մեկ անգամ Փուղեյանն ուղեց հակառակել, պահանջել ուղեց, բայց վոչինչ դուրս չեկավ:

— Զահել տպա յե, տաքանում ե, ինչ կա վոր...

ՄՏԿ-ն ճիշտ զիծ չեր բոներ...նա յել հանգիստ ե...ենտեղ ել մի տեսակ կոմերսիա կար...նրա ինչ գործն ե խառնվել կոլխոզի գործերին...թե մաշինա յե պետք, թող գան պայման կապեն... զակազ տան... չերթի գրվեն...

Այս, եսպես եր դրությունը, վասնդավոր, սարսափելի վտանգավոր:

Բայց փոխվեց եդ բոլորը, փոխվեց հենց այն որվանից, յերբ գյուղ յեկավ քաղաքամինը, յերբ «Հեղ-ալիք» յեկավ Զարդարը:

Ժողով ե: Փոքրիկ խրճիթում հավաքվել ե ամբողջ կոլտնտեսությունը: Գունատ գեմքեր, քարացած աչքեր...սպառում են:

— Մարդիկ...— Հնչեց Զարդարի կոշտ, շեշտակ ձայնը:

— Մարդիկ,—կրկին հնչում ե նույն ձայնը.— Եսպես չէ կարելի, սիալ ե ձեր բռնած ճամբեն: Թող մեկը հարցնի ձեզ, ի՞նչի յեք սպասում: Ումն եք սպասում: Ի՞նչու գութանը կարգի չե: Ի՞նչու նրանց վրա շղթաներ չկան: Ի՞նչու ձիերին ինաւող չկա: Ըսկեր բրիգադիք, ի՞նչով եք զբաղված: Ըսկեր կոմունիստներ, վորտեղ ե բջիջը...և նման տասնյակ հարցեր:

— Բրիգադիքն ի՞նչ կարող ե անել յերբ իրանք չեն աշխատում: Այդ ձիերին հարկավոր ե կուրորտ ուղարկել և վոչ թե աշխատանքի:

— Ի՞նչու սերմը պատրաստ չի: Ի՞նչու մաքրված չի...ով ե մեղավոր, ով:

Դեկավարությունը: Ահա ժողովի պատասխանը՝ Սկսվեց մի տեսակ կենդանություն, իրարանցում: Ժողովը կենդանացավ:

— Մարդիկ,—ոռումբիպես պայթեց Զարդարի ձայնը: Նորից տիրեց լոռություն, բայց այս անգամ ուրիշ ուրիշ տեսակի լոռություն: Սկսեց խոսք ու զրույցը: Շատերը յելույթ ունեցան, շատերը խոսեցին: Բոլորն համարյա թե միյեվնույն ասեցին, սակայն տարբեր տօնով, տարբեր խոսքերով, միմիկայով, ձեռքերի շարժումով: Բոլորը պահանջեցին, բայց մի քանիսը անկյուն եյին քաշվել զգալով, վոր իրանց տեղը չի, պապանձաւությունը եյին:

Այս, քանի վոր բրիգադիքը, պատասխանատուն սպիտակ գվարդիական եր, քանի վոր սերմի շտեմարանները «Քյոլսվի» ձեռքին եր, այդպես պիտի լիներ:

— Յերբ յես ընդունեցի քարտուղարությունը, եսպես եր վիճակը, ծանր եր, քայլայված: Հարկավոր եր բուժել հիվանդ մարմինը, նրանից կտրել հոտած վերքերը, ապա նոր գործի թողնել: Հարկավոր եր դեկավարությունց քշել դասակարգային թշնամուն, թույլերին, ոպորտունիստներին:

Հարկավոր եր ոպերատիվ դեկավարություն: Այդտեղից ել սկսեցինք:

Նախ բջիջը վոտքի հանեցի:

— Ըսկերներ, ամոթ ե, ես փոքրիկ կոլխոզում 18 կոմունիստ անդամ և թեկնածու կա:

Մենք պարտավոր ենք կոլխոզը վոտքի հանել, յերկու որ մեզ ժամանակ ե տրված, պետք ե ցանքսն սկսել. եսպես եր ասված քաղբաժնում:

Մենք պարտավոր ենք առաջնությունը վերցնել, այդպես ե ասել քաղբաժնը: Այդպես ել յեղափ: Դեկավարությունը փոխեցինք, թեև շատ գժվար եր, բայց հաղթեցինք:

Բոլոր կոմունիստները կոնկրետ առաջադրություն ստացան: Ամեն մեքենայի վրա, ամեն ողակում մի կոմունիստ եր նշանակված, վորը պատասխանատու յեր ցանքսին, պլանի կատարման:

Սկսվեց մի տեսակ յեռ ու զեռ, աշխատանքային շարժում: Բոլորը գեպի գաշտ...

Պակասում եր լծկանը: Ծանր եր հարցը: Հարկավոր եր խոսել կոլխոզնիկների հետ:

Փողով հրավիրեցի:

Ոժանդակ, թեթեվ աշխատանքում ափսոս ե յեզներին, ձիերին, մեքենան ոգտագործել... Հարկավոր ե յելք, ի՞նչ անենք: Քաղբաժնից հրահանգ կար, վոր եղափիսի գեպքու մաշխատել կովերը մոբիլիզացիայի յենթարկել:

Պակասում եր լծկանը, ժողովը պարտավոր ե լուծել այս հարցը:

Կովերը մոբիլիզացիայի յենթարկել: Յես առաջինը կտամ իմ կոփս, — ասաց կուսանդամ կոլխոզնիկներից մեկը:

Այդտեղից ել սկսվեց: Ժողովը վորոշեց մոբիլիզացիայի յենթարկել կովերը: Առաջինը կոմունիստները տվին իրենց կովերը: Նույնը կատարվեց մեզ մոտ և բերքահավաքի ժամանակ:

Այդպես սկսվեց գործը: Քաղբաժնն ել վերից շակեց ՄՏԿ-ի ձամբան:

ՄՏԿ-ն ակտիվացավ: Ոգնությունն աճեց, կոնկրետ դարձավ:

— Ահա սկիզբն այն հերոսական աշխատանքի, վորի մասին ուզում եմ մի քանի խոսք ասել, — լիմեց ինձ Զարդարը:

— Վետք ե տաել, — շալունակեց նա, վոր բրիգադիքի գերը ցանքսի և առհասարակ բոլոր աշխատանքների մեջ շատ պատասխանատու յե: Յես արդեն ծանոթացել եյի կոլխոզի ուժերի հետ Փուլեյան Գրիգորի հարցը տեղափոխեցի քաղբաժնին, համաձայնություն ստացա և առաջ քաշեցի բրիգադիքի պաշտոնում: Այս մեկն արած եր արգեն: Գրիգորի վրա կարելի յեր հույս դնելու նա լուռ, համեստ բնավորություն ուներ և շատ սպերատիվ եր:

Յես ամբողջ գարունը համարյա թե դաշտումն եյի լինում:  
Այսպես եր հարկավոր, ուրիշ կերպ չեր կարելի:

Դաշտում սկսեցինք կազմակերպել պատի թերթեր, վորտեղ գրում ու նկարում եյին լավ թե զատ աշխատանքների, աշխատողների մասին: Գրում եյին նաև ուրիշ կոլխոզների աշխատանքից: Եղ փոքրիկ, հաճախ կեղտոտված պատի թերթերը շատ ոգնեցին մեզ:

Հարկավոր եր կազմակերպել դաշտում գտնված գույքի, առանձնապես սերմի պաշտպանության գործը: Եստեղ մեզ ողնության հասավ պիտսերական կազմակերպությունը:

Պիոներ Չունախյան Անդրանիկը բռնել եր Խուրդայան Արշակին սերմը գողանալու ժամանակի Եղ բանը նախ թերթում տպեցինք, հետո յել բոլոր կոլխոզնիկներն իմացան: Անդրանիկին մենք նվիրատրեցինք, իսկ գող Խուրդայանին դատի տվեցինք: Ամեն որ աշխատանքից հետո, մենք հրավիրում եյինք կոլխոզնիկների 5-ական րոպեյի հագաք: Այդտեղ հաշվի եյինք առնում կատարած աշխատանքը, նրա գորակը, մատնացույց անում, պարզեվատրում լավերին, իսկ վատերին, ծույլերին, լողբերին պախարակում: Աշխատանքի այս ձևերը մենք ողտագործեցինք և հետագայում:

Հավաքներն ել մեզ շատ ոգնեցին:

Այսպիսի համառ ու սիստեմատիկ աշխատանքի շնորհիվ, ցանքը ավարտեցինք ապրելի 29-ին: Մեր հարեվանները հետ եյին մնում—հարկավոր եր ոգնել, չե վոր հարկավոր եր ընդհանուր ձակատով ապահովել հաղթանակը:

Մենք գնացինք Մուլթան-Սալայի «Սոց-բոց» կոլտնտեսության բուքսիրի:

Միշէվնույն ժամանակ սկսեցինք պատրաստվել քաղհանին: Պետք ե ասել, վոր մեր կոլտնտեսալին կանայք մեծ աշխատանք կատարեցին կոլխոզում առանձնապես քաղհանի մեջ:

Հատիկային և տեխնիկական բույսերի քաղհանը մենք կատարեցինք յերկու անդամ և մեկ ամսվա մեջ ավարտեցինք քաղհանը: Եստեղ ել հարկավոր յեղավ հարեվաններին բուքսիրի գնալ:

Վրա հասավ հունձը:

Ամբողջ կոլխոզը մի մարդու պես դաշտ գուրս յեկավ: Ճիշտ ե, յեղան և լողբներ, բայց զբանց մասին հետո: Գարնանը մենք ամբողջ աշխատանքների ընթացքում կոլխոզնիկներին կերակրում եյինք ձաշով: Զի յեղել մի որ, վոր սովածության պատճուղ վորնե մեկն աշխատանքի գուրս չգնա:

Նորից կենդանացավ պատի լրագիրը:  
Կոմունիստները գտնվում եյին առաջավոր շարքերում: Կոմունիստ, իսկական կոլխոզնիկ Խաթլամայշյան Խաչիկը, հարվածային աշխատանքի համար պարզեվատրվեց ազիտ սավառնակով թռչելու:

Մենք վորոշել եյինք, վոր վոչ մի հացահատիկ չկորցնել, բերքը հավաքել լրիվ—առանց կորուստի, գրա համար հարկավոր եր, վորպիսզի բոլորն աշխատեյին: Հիշում եմ, մենք ունեյինք մի կոլտնտեսունի, Շուշանիկը, վորը կուսթեկնածու յեր: Շուշանիկը մի տեսակ պասիվացել եր, բալաստ եր դարձել թէ բջիջի և թե կոլխոզի համար: Վորոշեցինք Շուշանիկին ևս ուղարկել դաշտային աշխատանքի:

Շուշանիկին հայտնեցինք մեր վորոշումը, բայց նա հրաժարվեց դաշտային աշխատանքի գնալուց:

— Յերեք տարի դաշտային աշխատանքի չեմ յեղել և չեմ գնա, — համառում եր նա:

Յես վորոշել եյի համոզել նրան—այդպես ել յեղավ:

Շուշանիկը դաշտ գնաց:

Կանայք մեծ մասամբ աշխատում եյին խուրձ կապելու վրա, Շուշանիկն ել սկսեց խուրձ կապել:

Վերջում նա այնքան ակտիվացավ և հարվածային կերպով աշխատեց, վոր հնձիչ մեքենայի ամեն մի շրջանից նա կապում եր 40—50 խուրձ, իսկ ուրիշները 15—20—25:

Բրիգադում հարկավոր յեղավ կազմակերպել ընկերական դատարան, լոգիստիկան և այլ կարգ խանգարողներին դիմումներին հրավիրելու համար: Յեվ ահա Շուշանիկը դարձավ եղ գործի ձեռներցը, կազմակերպողը, իսկ հետագայում եղ դատարանի պատվավոր նախագահը:

Թէ ինչքան մարդ ինելիքի բերեց Շուշանիկն իր դատարանով, ափսոս ժամանակը չի ներում, թե պատմեմ:

Հունձն ել ավարտեցինք իր ժամանակին, կալսեցինք և ոգոսովի 11-ին կառավարությանը հասանելիք հացը հանձնեցինք 100 տոկոսով: Տեղափոխության միջոցները թույլ եր, հարկավոր եր արագ կերպով հացը տեղափոխել ելեվատոր: Ոգնություն եր հարկավոր, խոսեցի ընկեր Դոկուկինի հետ: Ամենակարող ե այդ մարդն, այստեղ, վորակ հարկավոր ե ոգնել: Կամ ստեղծել մի վորևե բան, բարից ջուր կհանի. հետո մի տեսակ հողի մարդ ե, իսկական, իսկական բողեկիկ ե:

Այդ խոսակցությունից հետո, ՄՏԿ-ն մյուս որը մի մեքենա ուղարկեց, վորը շատ մեծ ոգնություն եր մեզ համար:

Իմիջի այլոց յես ձեզ չպատմեցի այն հերոսների մասին, վոր մենք ունենք, բայց յես շատ կցանկայի, վոր դուք ինքներդ ծանոթանաք եղ մարդկանց հետ:

Յես այդպիս ել արեցի:

Աշնանը ցանել ենք, — շարունակեց Զարդարը, — 116 հեկտար: Գարնանացանի համար վարել ենք 200 հեկտար, չնայած, վոր ըստ պլանի, պիտի վարելինք 170 հեկտար: Բերքի բաշխումը սկսել և ավարտելու վրա յենք: Սերմն ամբողջովին ամբարված ե ու մաքրված:

Իմ կոլխոզը փոքր ե և բոլոր հասարակական ֆոնդերն արգեն առանձնացված են:

Որինակի համար — կասեմ հետեւյալ ֆոնդերը.

1. Կոլխոզային առեվտրի . . . . .	65 ցենտներ
2. Մանկամսուր և մանկ. հրապարակ . . .	89 "
3. Հասարակական սննդի . . . . .	30 "
4. Հաշմանդամների ու կարմիր բանակայինների ընտանիքին . . . . .	10 "

Վերջին թիվը մեզ մոտ շատ քիչ ե: Բացի սերմից — կառավարության պարտքից ու սերմֆոնդից — մեր կոլխոզիկներն ստանում են՝ ամեն մի աշխորի համար, հատիկային կուլտուրա—8 կգ և բանջարեղեն 1,7 կգ:

Կոլխոզիկների ընդհանուր ժողովը բուռն ցանկությամբ վորոշեց վերագրածնել պետությանը գարնանն ստացած բանջարեղենի ֆոնդը, չնայած նրան, վոր հիմա չի պահանջում վերադարձնել:

Հիմի մենք պարտավորագիր ենք տվել մեր քաղբաժնին, մինչև հունվարի 15-ը վերջացնել դալիք տարվա գարնանացանի նախալարաստական աշխատանքները: Մենք արդեն մշակել ենք ընկ. Սալինի — բարձր բերքատվության կոչը: Համարյա բոլոր ողակներում անցել են գործնական աշխատանքների: Եղ հարցը — պատվիր հարց ե: Մենք շատ ենք սիրում մեր քաղբաժնը և նրա կայուն դեկավար Նիկոլայ Ալեքսանդրովիչ Դոկուկինին: Յեվ վորովինեան շատ ենք սիրում ու հարգում, ապա մենք թույլ չենք տա, վոր Համամիութենական պատվավոր կարմիր տախտակին արժանացած մեր քաղբաժնի աշխատանքների ու պատվիր վրա, թուլամորդության մի սև բիծ անդամ յերեվա:

Այս խոսքերի հետ, Զարդարն ինձ հանձնեց լրագրի մի կտոր: — Այ, հստեղ տպված ե մեր պարտավորագիրը:

«Այսոր մենք ստացանք կենտրոնական որգան «Պրավդան»: Նրա առաջին յերեսի վրա կարգացինք մեզ համար չափաղանց հետաքրքիր և ուշախալի մի լուր: Մեր Մյամնիկյան քաղբաժնը, նրա պետ, մեր սիրելի Նիկոլայ Ալեքսանդրովիչ Դոկուկին, հանված ե 17-րդ համագումարի անվան Համամիութենական պատվավոր կարմիր տախտակի զրա:

Մենք համոզված ենք, վոր այսոր դուք ել մեզ պես հպարտանում եք, վորովինեան մեր կազմակերպիչ քաղբաժնների հետ մեկտեղ, Համամիութենական պատվակիոր կարմիր տախտակի վրա գրված ենք և մենք, անհաջտ պայքարում, բոլցնիկյան կոլխոզներ ձեռք բերած հարգածայիններաւ կենտրոնական — «Պրավդայում» դետեղված փոքրիկ, բայց բազմանիշ նշանակություն ունեցող մեր քաղբաժնի բնութագործ, ասված ե: «այս տարի պետության և հանձնված 91.000 ցենտներ հաց, անցյալ տարվա — 88.000 ցենտ. փոխարեն»:

Հենց եղ հաղթական թվերն են մեզ իրավունք տալիս հպարտանալու:

Ազա մի փորձենք յետ նայել գեպի անցյալը և տեսնենք, թե ինչո՞վ եյինք մենք զբաղված, 1932 թ. գեկտեմբերին կտեսնենք, վոր յերկաթի ձողերը ձեռներին, փնտում եյինք «Պրավդա»-յի մեջ նշած 88.000 ցենտներ հայի մեծ մասը, վորը գորգացված ու պահված եր կուլակների, լոդրներին, սիմուլանտների, ժողովրդի թշնամիների հորերում: Կուսակցության ուղարկվածները, բարձրածինցիները, նախ մեզ ոգնեցին զուրս շպրեկ կոլխոզ խցեկված, սև ամբարձների, կուլակային հորերի ստեղծագործողներին: Քաղբաժնների ամենորյա դաստիարակչական աշխատանքի շնորհիլ են լոդրներից, հարյուրավոր անհայտ կոլխոզնիկներից այսոր աճել են նոր մարդկայի աշխատանքի հերոսներ: Վերցնենք թեկուլ հենց մեր Մագոյանը, կամ Տիրացոյանը Մեծ-Սալահից և շատ ուրիշները. անցյալ տարի եսպեսի հերոսները մազ անհայտ եյին:

Մենք, այդ փառավոր պայքարի բանակը, մենք, հաղթանակների ստեղծագործողներս, մենք ենք գրավել այսորիվա հպարտանալու իրավունքը, վոր մեր քաղբաժնը, մեր հրամանատարը ընկ. Դոկուկինը հանված ե 17-րդ համագումարի անվան Համամիութենական պատվավոր կարմիր տախտակին:

Այդ պատվիր տամսապատկում ե մեր պատասխանատվությունը յերկրի առաջ, կուսակցության առաջ: Մեր յերկրամասի առաջապրուների ողակները ամուր պահելու համար, մենք ունենք բոլոր հնարավորությունները: Մեր «Հեղ-ալիք»-ի կոլխոզնիկներիս հաշվառ, գարնանացանի բոլոր նախալարաստական աշխատանքները կավարտենք համագումարի բացման որը, հունվարի 25-ին: Մեր կարծիքով, գլխավորը հիմա այն ե, վորպեսզի ձիշող գասավորնեմ լինեն ույժերը, ըստ աշխատանքի բնագավառների:

Կազմում ենք առաջին բրիգադը, մոլախոտերի զեմ կավելու համար: Հունվարի 25-ին կավարտենք 5-րդ գաշտի մաքրումը:

Մեր կոլխոզի լավ հարգածայիններին նշանակում ենք ձիապահներ:

Դեկտեմբերի 13-ին ավարտել ենք սերմի մաքրումն ու տեսակալորումը:

Բոլոր տեսակի նախապատրաստական աշխատանքները կազմարտենք գոչ ուշ քանչ հունվարի 25-ը:

Բրիգադների համար պատրաստել ենք շարժական սեղանատուն, խոհանոց, սանհատարական և կարմիր անկյուններ:

Առաջին փորձնական յելույթը կկատարենք հունվարի 2-ին համագումարի բացման որը: Վաղ գարնանացանը կավարտենք մարտի 20-ին, իսկ առհասարակ գարնանացանը, ապրիլի 20-ին: Մենք արդեն անցել ենք կազմերի պատրաստման գործին: Մենք սոցմրցման ենք հրավիրում բոլոր կոլխոզներին, նախապատրաստական աշխատանքներն ավարտել հունվարի 25-ին, վորի համար ժամը 12-ին կատարել առաջին փորձնական յելույթը դեպի դաշտ»:

«Հեղափոխության ալիք» կոլխոզի կոլխոզնիկներ

— Դա,—կարդալով պարտավորագրի այս փոքրիկ հատվածը լրագրում ասացի յես: Զարդարը մի թեթև ժպտաց:

— Նետ, — ասաց նա:

— Այդ դեռ բոլորը չի:

Հիմա, ինչպես ինքներդ եք տեսնում, մեր կոլխոզը բոլոր խնդիրները կատարում ե բոլշևիկորեն, բայց յես դարձյալ դադար չունեմ: Իսկ հիմա ել կուլտուրաշավ ե, մենք պայքարում ենք, վոր կոլխոզնիկներն ապրեն մաքուր, կուլտուրական. եդ գործ կատարողը մեզ մոտ կանացի կուլտուրավորդիան ե:

— Ձեր այն հարցը, — դարձավ ինձ Զարդարը, թե ի՞նչ եմ ուզում յես, ի՞նչ եմ մտադիր անելու, ի՞նչն ե ինձ ավելի մտագբաղ դարձնում, վոր ել ավելի աճի ու զորտնա կոլխոզը, եսքանը կասեմ, վոր առաջին՝ մեր կոլխոզում լինի ելեկտրական լույս — հերիք ե, ինչքան եդ նավթի հութին նստեցինք:

— Յերկրորդ՝ մեր կոլխոզում լինի մի կուլտուրական հրապարակ — կանաչ ծաղիկներով, թփերով, նստարաններով, վոր մեր կոլխոզնիկը, իր աշխատանքից հետո բաց ողում, իր դռան մոտ, մի մաքուր, գեղեցիկ զբոսավայրում կարողանա զբոսնել. ծաղիկների անուշանոտ բուրմունքով, մաքուր ոդ ծծի:

— Յերրորդ՝ ես տարի սկսելու յենք մեր կոլխոզի կուլտուրալի տան կառուցումը և հարվածային կոլխոզնիկների համար հանգստի տան կառուցումը, վորտեղ լավ հարվածայինը կանցկացնի իր հանգստի որերն ենպես, ինչպես կարգն ե:

Շատ բան եմ ուզում անել, և ես ասածներս անպայման կանեմ, քանի գեռ կա մեր քաղբաժնը, մեր ամենասիրելի Դոկտորինը, մեր թանկագին ընկ. Յեղիազարյանը: Եդ բոլորը մենք կանենք, և եդ որը հեռու չի:

Մեկել են եմ ուզում, վոր շատ դժվար ե ասելը: Համա պիտի ասեմ:

Զարդարը մի պահ շփոթվեց. մի տեսակ ամոֆիածություն շղարշեց նրա յերեսը:

— Ե՞ն, վոր ինձ պես կրակոտ, շախին, մի բոլշևիկ մարդ եմ ուզում: Հետո նա բարձր ծիծաղեց և վերջում ավելացնելով ասաց — «յետսություն ընկեր, կտեսնվենք»:

Ե՞ս, Զարդար. կրակի կտոր Զարդար...

Ի՞նչ անմար կրակ կա նրա հոգում, ի՞նչ արեգակներ են փայլում նրա ձամբի վրա և դեռ ինչ զառդ ուղիներ կրացվեն նրա ձամբին...:

— «Քանի կա քաղբաժնը, մեր ամենասիրելի Դոկտորինը մեր թանկագին ընկ. Յեղիազարյան»: Այս խոսքերը անվերջ հնչում են իմ ականջներում:

Բայց չե վոր նրանք միշտ կան:

— Կնշանակի եդ բոլոր մենք կանենք, եդ որը հեռու չի: Ի՞նչպիսի հավատի մարմնացում, ի՞նչպիսի աշխատանքի վեհ կորովներ կան Զարդարի մեջ:

## Թե ով վերցրեց առաջնությունը

— Հարություն Մագոյան կամ ուղղակի Հարություն, մինչույն եւ Թարմ, առույգ, թուխ թուխ աչքերով մե յերիտասարդ ենա խոսելու մեջ ժլատ ե կամ ավելի ճիշտ՝ կարծես թե մըմնում, ինքն իրեն խոսում եւ Քայլելիս միշտ գետնին ենայում, զլուխը կախ ե և թիկունքը դուրս ցցված։ Հեռվից նայողին թվում ե, թե մեջքը կոր ե կամ կուզիկ եւ Յես նրան հանդիպեցի քաղբաժնում։ Մենք իրար հետ յերկար խոսեցինք։ Յերբ քաղբաժնից գյուղամեջ եյինք գնում, նա քայլում եր լուռ, թեվի տակ տանելով մի կապոց գիրք։

— Հարություն, եդ ի՞նչ գրքեր են։

— Սովորում եմ, ընկեր Հովաննեսյան։

— Ի՞նչ ես սովորում, — հետաքրքրությամբ հարցը յետ։

— Դաշտային բրիգադիրների կուրսերում։ չե վոր յես ողակավար եմ։ Իսկ քաղբաժնն ուզում ե, վոր սովորեմ յեվ բրիգադիր դառնամ, ասենք յես ել եմ ցանկանում, — այ, ես գրքերով ենք սովորում։

Մենք դադարեցինք զրուցել, գնում եյինք դեպի գեղամեջ։ Իմ կողից — ըստ սովորության — քայլում եր Հարությունը զլուխը քարշ արած, կարծես թե ինչ վոր կորցրած բան եր վնասում։

— Հարություն։

— Հը։

— Եդ ի՞նչ ես մտածում ելքես խորասուզված, — հարցի յես։

— Հեջ հենց ետպես մտածում եմ դասի, կուրսերի մասին։ գեռ մի ամիս ել կա։ Իսկ կոլխոզում աշխատանքն ինձ ե սպասում։ չե վոր շուտով գարուն կգա, հարկավոր ե պատրաստվել…

— Կարիք չկա մտածելու, մի՞թե գեղում դու մենակ ես. մեկել ի՞նչու ես այդպես կարծում, իսկ ես սովորելը գարնան համար պատրաստվել չի։

Յերեկո յեր։ Յեղանակը ցուրտ։ Արևելյան անձրևախառն քամին ու ձյունը անխնա ծեծում եյին մեզ։

Հետաքրքիր եր յեվ այն, վոր նրան մինչև «Հարություն» կանչելը, կանչել են Հարությունը, Հարությունը յեվ ուշ, շատ ուշ, միայն Հարություն։ Իսկ հիմա, յերբ նրա ջահել ուսերին կյանքը բեռնել ե իր հոգու յեվ իրավունք ե տվել նրան սեփական խելքով ու մտքով հոգալու իր անտեսությունը, այդ որվանից միայն նա գարձել ե Հարություն Մագոյան։

Աբրահամ բիծան, վորը Հարությունի հարազատ հայրն ե, այսոր, յոթ տասնյակ տարիների ծանրությունը մեջքին բեռարած, ծերության կնճիռները գեմքին ակոսած կանգնել ե բոլորովին մի նոր կյանքի շեմքին։

Հարությունն իր սովորություններին հակառակ, հոր մասին խոսելիս, մի տեսակ շռայլանում ե ու վոգեվորվում։

— Ե՞ս, ընկեր, հաճախ ինձ թվում ե, թե նա յե մեր տան ջահելը։ Նրա ծեր բազուկներում մի անասելի թարմություն կա։ Բայց հաճախ, շատ հաճախ, թառամած ե լինում նրա ակոսութեմքը։ Ինչպես ես զրքի սեմք ու սպիտակն եմ ջոկում, անպես ել նրա մշուշի տակ փայլող աշքերում կարողանում եմ ջոկել նրա ծեր յերիտասարդության որերը։

— «Զ՞ վոր զեռ բազուկներում ուժ կա, — ասում ե հայրս, սրտում յեռանդ։ Ես կյանքի կեսի չափ մի կյանք ել վոր ապրեյի, են վախտը ջահանգամը թե կ'մեռնեյի։ Հետոնա զվարթանում ե, նրա զեմքի ամեն մի ակոսը փայլում, ծիծաղում ե վարդի պսակաթերթերի պես։

— «Դե, ի՞նչ արած, ծերություն ա ելի, չե վոր մենակ յես չեմ», — խոսում ե ինքն իրեն հայրս։

— Իսկապես, մտածում եմ ինքս ինձ, չե վոր ծերություն ե, վոր ամենքիս առաջ ել, վաղ թե ուշ, փովելու յե եդ ճամբեն։

Այդ մարդու վրա նայելիս, թվում ե, թե հեռավոր մի անցյալ մարմնանում ե քո զեմ, նույնքան անպատճեց, նույնքան հասարակ ու պարզ, ինչպես ինքն՝ Աբրահամ բիծան։

Նրա ուսերի հետեւից, անափ ծովի նման փովում ե նրա չարքաշ կյանքը։

Վոնց վոր յերեկ լիներ։

Յերիտասարդ եր Աբրահամը, ամուսնության առաջին զիշերն ել իր ոչախում, իր տանիքի տաք չկարողացավ անցկացնել։

— «Բա եդ վոնց կլիներ, բա Ալեքսանդր Միխայիլովիչ Պավելնկոյի գործերը մեռել եյին։

— «Կալվածատեր եր Ալեքսանդր Միխայիլովիչ Պավլենկոն։ Մեր գեղից շատ մարդ եր նրա մոտ աշխատում, եղ շատ մարդ՝ կանցից մեկն ել յես եյի, — պատմում ե Աբրահամ բիձեն։

«Դեռ յերիտասարդ եյի, ջահել, ես բեխերս, վոր գարնան կանաչի պես դեռ նոր եր ծիլ տվել՝ մի կտոր հաց վաստակելու համար, ծառայության մտա նրա մոտ։

«Ուրիշ ճար ու իլլաջ չկար ընտանիքի հոգու քաշելու համար։ Սեփական միջոցներից ել զուրկ ելի, վոր սեփական տնտեսություն վարեմ։ Բայց դե՛, ընտանիքը, ծեր ծնողներն ապրել եյին ուզում։ Յերկար, շատ յերկար տարիներ յես աշխատեցի Պավլենկոյի մոտ։ Զահել թարմ ուժերս նրա ձիերի սրմբակների, նրա դամշու տակ մաշեցի։ Բայց դե ինչ ոգուտ դրանից։ Վոչինչ, ելի են քաղցածը, ելի են հացի կարոտ մասցինք։ Չեմ մոռանա յերբեք, վոր յես, բայց այդ, վաստակեցի նաև մի ծանր հիվանդություն, մի անբուժելի տկարություն։»

Շատ դառն ե Աբրահամ բիձի պատմությունը։ Ենպես վոր, այդ մանրամասնությունները կթողնենք մի ուրիշ ժամանակ։ Հեղափոխությունից հետո Աբրահամ բիձեն վերադառնում ե գյուղը բայց, չանցած դեռ մի տարի, նա նորից բատրակության ե մտնում, ես անգամ Պավլենկոյի «թուների»—գյուղի կուլակների մոտ։

«Ծերության որերը, — շարունակում ե պատմել Աբրահամ բիձան, — սկսեցին զուել, հետո ել հիվանդությունս մի կողմից, այնպես վոր հույսս ես մի մինուճար հարութը մնաց, վոր արգեն որեց որ աճում, դոփոշանում եր։ Յեվ ահա մի գեղեցիկ որ, նա յել բռնեց հոր ճամբան ու բատրակություն արակ։ Տան գլխավորը դարձավ հարութը, յեթե վոչ դեկավարելու, կարգ ու կանոր մտցնելու, այլ տան հոգսերի ծանր լուծն իր վրա վերցնելու։»

— Հազար ինը հարյուր քսանյոթ թիվը եր, — պատմում ե Հարությունը։ մեր գեղից մի քանի վերստ հեռու, մի խումբ գեղացիք բնակություն հաստատեցին—հետո ել եսպես ասած— հողագործական ընկերություն կազմակերպեցին։ Յես ել միտք փոխեցի գեղի եղ հողագործական ընկերությունը, բայց դե հեշտ բան չել տուն ու տեղ փոխելը, հազար ու մի ցավի հետ եր կապված։ Յերկար մտածեցի արդ առթիվ և վերջիվերջո վորոշեցի աեղափոխվել այդտեղ ու մտնել հողագործական ընկերության մեջ։ Ընտանիքս մեծ եր, տան միակ աշխատողը յես եյի։ Են ժամանակ ջահել եյի, ճիշտ ե, բայց դե կյանքը սովորեցը եր ինձ հասակավորի պես մտածել։ Եղ մի տեսակ

շահել ծերություն եր։ Հողագործական ընկերությունը կառավարությունից տրակտոր եր ստացել։ Հետո յես մտածում եյի և հավատացած եյի, վոր իմ աշխատանքը հողագործական ընկերության մեջ ավելի ոգուտ կբերի։

Եսպես վորոշեցի և մտա ընկերություն։ Տնեցիք ել հակառակ չխոսեցին, նրանք ել հետեւիցս յեկան։ Հողագործական ընկերության իջեվանը քաղաքին ավելի մոտ եր, իսկ տեղի հողերն ավելի արգավանդ։ Մոտ յերեք տարի յես աշխատեցի ընկերության մեջ։ Առաջին տարին առանձնապես ինձ համար քիչ ծանր եր, բայց հետո շատ լավացավ։ Մեր իջեվանում ապրում եյին նաև մենատնտես գլուղացիներ, վորոնք մեզ հետ եյին յեկել, բայց դե ինչու չմտան ընկերության մեջ՝ չիմացա։ Անդուրեկան եր մեր ընկերությունը շատերի համար, և առանձնապես Զալթը կուլակների համար։ Հասկանալի յեր, վորովհետեւ ընկերության անդամները գլխավորապես են գեղացիք եյին, վոր գեղում յեղած ժամանակ, իրենց վաստակը «տալիս» եյին կուլակներին և աշխատում եյին նրանց մոտ։ Իսկ յերբ նրանք ընկերություն կազմակերպեցին և գեղից դուրս յեկան ու եղ հողերը գրավեցին, ապա նախ՝ եղ արգավանդ հողերը նրանց ձեռքից գնաց, հետո յել՝ կուլակների աշխատող ձեռքը պակասեց ու թանգացավ։

— «Թե կաղեաները կգան, տեսեք, թե վոնց ձեզ եղ տեղից կը շեն։», — ասում եյին նրանք։

— «Խեղճ» մարդիկ չգիտեյին, վոր մենք պետք ե իրենց քենք, Նրանք մեզ ձեռ եյին առնում, մասխարա գցում, ծիծաղում վրաներս։

— «Չփաղի», «տկլորի», «քաղցածի» խուտր եյին անվանում մեր խուտորը։

— Վոչինչ, մտածում եյինք մենք, թող ալգես լինի, չե վոր թշնամու խուք ա։ Զե՞ վոր մենք մեր սեփական քրտինքով եյինք մեր որվա հացը վաստակում, բայց չե՞ վոր մեր վաստակը մենք ինքներս ենք վայելում։ Յեվ վերջապես չե՞ վոր մենք ուղում եյինք, վոր եղ չչփաղ» կյանքից ունեվոր կյանք ստեղծել։

Իսկապես մենք մեր հաշիվերի մեջ չեյինք սիսալվել։ Հազար ինը հարյուր յերեսուն թվին, յերբ սկսեցին կազմակերպել կոլխոզները, մենք առաջինը յեղանք, վոր մեր ընկերությունը շուռ տվինք կոլխոզի։ Մի քանիսը, վոր ընկերության մեջ ել մարդավարի չեյին աշխատում, կոլխոզ շմտան։

Բայց գրանցից շատերն են փոշմանել հիմա, վոնց վոր փոշմանեց Յավրույան Ոքսենտը։

Կոլխոզում յես աշխատում եյի վորպես շարքային կոլխոզ-նիկ, դաշտային աշխատանք եյի կատարում:

Զգիտեմ թե ինչու, բայց մի տեսակ դուր եր գալիս ինձ կոլեկտիվ աշխատանքը: Վորոշել եյի, պինդ եյի վորոշել, վոր հեշ բաց չթողնեմ կոլեկտիվի պոչը: Ինչպես տեսնում եք, այդպիս ել արեցի:

— Յերբ յես կոլխոզ մտա, տնեցիք չհակառակեցին, նրանք ել համաձայնվեցին կոլխոզ մտնելու: Այդ գուցե նրանից եր, վոր նրանց միակ հույսը յես եյի և չեյին ուզում խաթրիս կոչել, կամ գուցե նրանք ել համաձայն եյին, այնուամենայնիվ հակառակ չեյին:

— Կոլխոզի դժվար տարիները, ինչպես 1930—32 թթ. շատ ազգեցին մեր կոլխոզի վրա: Շատ շատերը դուրս յեկան կոլխոզից, շատերն ել մնացին: Իսկ յես ու ինձ նման շատերն ել մնացինք կոլխոզում ու ել ավելի յեռանդով սկսեցինք աշխատել: Իսկ կոլխոզ մտնելու և այդպես յեռանդով աշխատելու իսկական պատճառն են վախտը, ինձ համար ել ենակես պարզ ու հրատակ չեր: Այսպես եյի մտածում: յերբ կազմակերպեցինք հողագործական ընկերություն, եղ բանք մեզ ցուց տվեց մեր կառավարությունը, նա ոգնեց մեզ, մենք մտանք այնտեղ և իսկապես տեսանք, վոր լավ յեղավ: Հիմի, յերբ կոլխոզ են կազմակերպում, չե վոր ես ել մեր կառավարության ու կուստիցության գործ ե, կնշանակի լավ ե, վոր ետպես են անում: Յեվ վերջի վերջո, չե վոր մեր սեփական կառավարությունն ա, նրան վոր չլսենք, ապա՝ ում պիտի լսենք: Ահա եսպիսի մտքերով, յես խորն ու առանց տատանվելու հավատում եյի եղ բանին, և հավատում եյի, վոր լավ կիմի: Ահա հենց եղ հավատն եր, վոր ինձ կոլխոզ բերեց եղ հավատով ե, վոր յես անհոգ յեռանդով աշխատում եմ, եղ հավատն ե, վոր կարծես լուսավորում ե իմ ճամբեն եմ՝ ելեկտրական լամբի լույսի պես:

— Զքավոր, ծանր կյանքից ձանձրացել եյի, ուզում եյի ունեւոր լինել, լավ ապրել, հալալ քրտինքի վաստակով:

Դրա համար ել կոլխոզ մտա:

1932 թվի ձմռան կուբանի կուլակային սաբոտաժը մեղանկեղծ նվիրված կոլխոզիկներիս շատ բան սովորեցրեց: Հենց զրա համար ել, յեռեսուն յերեք թվի գարնանը մենք վորոշել եյինք այնպես աշխատել, վոր ձմռան դժվար որերն ել յերբէք, յերբէք հետ չդպոնան: Նա զարձյալ ցանկանում եր ինչ վոր բան ասել բայց նրա գեմքը մի պահ լրջացավ, շրթունքները թեթեվակի շարժվեցին ու նա լոեց:



Ողակավար ընկ. Հար. Մագոյան

Մագոյան Հարություն, կոլխոզի դաշտային աշխատանքների հարվածային ողակավար:

«Հեղափոխության ալիք» — կոլխոզում Մագոյանների թիվը շատ ե և ահա զրանք եյին, վոր առաջին անգամ սերմը հողին հանձնեցին, և առաջինն ավարտեցին գարնանացանը:

Վաղ գարնանը նրանք վարի, ցանքսի դուրս յեկան: Ամեն ինչ կազմ ու պատրաստ եր. այս հանգամանքն եր, վոր աննկարգը ելի հերոսությամբ ապացուցեց, թե ինչպես պետք ե աշխատել, յերբ հարց ե դրված կոլխոզները դարձնել բոլշեվիկյան, իսկ կոլխոզնիկներին՝ ունեվոր:

Այո, ինչպես ինքը Մագոյանն ե պատմում, նա կոլխոզում շաբքային կոլխոզնիկ եր, գլուխը կախ աշխատում եր և միշտ առաջինն եր դուրս գալիս:

Այդ բան հենց սկզբից նկատել եյին քաղբաժինը և կուսրջիչի քարտուղար՝ Զարդարը: Չե վոր նրանք շարունակ կոլխոզնիկների մեջ եյին:

Գարուն ե. կոլխոզը դաշտ ե դուրս գալիս, ամեն ինչ պատրաստ ե, սակայն բացակայում ե մի բան — հարկավոր են լավ զեկավարներ, թարմ, անվճառ հերոսներ են պետք ես զեկավարության համար:

— Ես ուր են, վորտեղ են նրանք, նրանք, վոր պետք ե մինեն գարնանացանի անխոս կատարման գործունյա առաջավորները: Շատ դժվար, պատասխանատու և կենսական եր այս հարցը կոլխոզի համար: Նրա զեկավարությունը տասնապատիկ

քրտնում, վիճում, հուզվում եր, բայց դժվար եր հարցը կուլ-խողի համար, պատասխանառու յեր, կենսական...

Միթե այսքան տարվա պայքարն ու աշխատանքը չեն ստեղծել այդ հերոսներին, այսորվա պահանջին հատուկ դեկավարներին: Անորոշ եր հարցը:

Բայց չե վոր բոլցեկների համար անլուծելի հարց չե կարող լինել: Յեկ ահա ոգնության եր գալիս քաղբաժնը, կարծես թե վառվում ե հույսերի ձրագը:

Հենց այդ ժամանակ եր, վոր յերեվան ե գալիս Մագոյանը, կոլխոզային կենդանի զանգվածին ձուլված, գլուխը կախ, միշտ իր աշխատանքին: Այս, այդպես եր յեղել Մագոյանը, այդպես են յեղել և նրա նման շատերը: Հարկավոր եր մի ձեռք, մի կարող, ցանկացող ձեռք, վոր դուրս քաշեր նրան ընդհանուր զանգվածից:

Դուք այստեղ պետք ե աշխատեք:

Դուք պարտավոր եք դեկավարեր:

Սլապես պետք ե դեկավարներ:

Քաղբաժնը, ո, եղ ամենքի սիրելին, ամենքի՝ վոր գիշեր ցերեկ կոլխոզի դաշտում հալալ քրտինք են թափում: Սուր եր քաղբաժնի տեսողությունը: Կարծես նրա համար դժվար չեղալ եղ դեկավարներին վորքի հանելու, գործի կոչելու:

Յեկ ահա յերիտասարդ կարողություններով լի Հարություն Մագոյանը դառնում ե ողակավար: Սկսվում ե աշխատանքի մի նոր շրջան: Յեկ շատ հետաքրքիր ե լսել իրեն՝ Հարություն Մագոյանին, թե ինչպես նա առաջնությունը տարավ:

— Յերբ ինձ ողակավար նշանակեցին, — պատմում ե Հարությունը, պատկերացնում եք, թե վորքան դժվար եր ինձ համար մի այդպիսի դժվարին պարտականություն կատարելը: Բայց դե, ինչ արած, կոլխոզի գործը եղան եր պահանջում: Մեկ ել վոր քաղբաժնն առաջարկեց ինձ, նշանակում եր հարկավոր եր աշխատել: Յես լավ եյի հասկանում, վոր իմ հանձն առած գործը դժվար ե ու պատվավոր, հենց դրա համար ել գիշեր ցերեկ քուն չունեյի, մտածում եյի, մտածում, վոր հարկավոր ե պատվավոր գործի տակից հաղթանակով դուրս գալ:

Սկսեցի աշխատել. պետք ե ասեմ, վոր իմ աշխատանքներում շատ ոգնեցին Զարդարն ու քաղբաժնը՝ ընկ ընկ. Դոկուկինը և Յեղիազարյանը:

Հիշում եմ, վոր շատ հաճախ, մին ել տեսար, դաշտի են ծերիցը դեպի մեզ ե թոշամ ընկեր Դոկուկինի մեքենան կամ հաճախ նրանք ձիով ելին գալիս:

Եղ մարդկանց տեսնելիս կամ լսելիս, ինձ թվում եր, թե յես մի անհաղթելի ուժ եմ ստանում:

Յես շատ եմ հարգում, շատ, ընկեր Դոկուկինին, ուղղակի սիրում եմ նրան: Յես համոզված եմ, քանի վոր նրանց դեկավար ձեռքը մեր վկին ե, մենք անպայման ունեմոր կդառնանք:

— «Մինչեվ աշխատանքի նորման չկատարես, դաշտից դուրս չգնաս, տուն չվերադառնաս»: Ահա ընկեր Դոկուկինի այն խոսքերը, վոր մինչեւ հիմա յել չեմ մոռացել:

Սլապես ել անում եյինք: Այդ խոսքերը դարձել եյին մեր ամենորյա աշխատանքի լոգունը:

Գարնանացանի աշխատանքների հենց սկզբին ընկ. Փուղեյանը — մեր բրիգադիրը — մեզ մոտ կազմակերպեց սոցմրցում:

Շատ լավ աշխատող ե ընկ. Փուղեյանը, իսկապես վոր բրիգադիր ե: Մենք նրան սիրում ու հարգում ենք, նա շատ նվիրված ե աշխատում: Եղափիսի աշխատողները մեր կոլխոզում ենքան ել շատ չեն:

Ինձ հաջողվեց ծանոթանալ այդ բրիգադիրի հետ: Փուղեյան Գրիգոր — 28 տարեկան, միջին հասակով մաքուր հագնված, համեստ բնավորության տեր մի յերիտասարդ եր:

Կուսակցության թեկնածու յե, սրան ել քաղբաժնի և առաջ քաշել աշխատանքի,

— «Եսպիսի անգին տղան, կոլխոզի հին դեկավարության ժամանակ, համարյա թե հալածված եր, բոլորի ուշադրությունից հեռու. — ասում ե կուսքիջի քարտուղար Զարդարը: Յերբ յես բջիջի քարտուղար դարձա, առաջինը Փուղեյանն ընկավիս աչքիս: Յես հավատացած եյի, վոր չեմ սխալվի: Եղափիս ել համոզված, նրա թեկնածությունը տեղափոխեցի քաղբաժնը, բրիգադիրի պարտականության համար: Քաղբաժնը հաստատեց: Յեկ առաջին իսկ ցանքսից Փուղեյանը ցույց տվեց իրան:

Հետո Փուղեյանի մի լավ կողմն ել այն եր, վոր նա մեր քաղբաժնի թերթի մոտ բարեկամներից ու թղթակիցներից եր: Նա իր աշխատանքի հաջող փորձերը թերթի միջոցով տալիս եր ուրիշներին, իր բրիգադի լավ հարվածայիններից աշխատանքը լուսաբանում եր թերթում: Նա գնահատել ու կազմակերպել գիտե իր բրիգադի անդամներին և նրանց աշխատանքը»:

«Մեր կյանքում, — ասում ե Փուղեյանը, — մենք միշտ վատենք ապրել: Զի յեղել մի տարի, վոր մեր հայը ծերը ծերին հասնի, Բայց ես տարի յես վաստակել եմ 352 աշխոր: Աշխորն պետք ե ստանամ 8 կիլոգրամ հատիկային բերք, ընդամենը — 2818 կիլո: Միթե ինձ հերիք չե, իհարկե հերիք ե, դեռ

շատ: Յես ընտանիքից շատ քիչ եմ և հսկայական ավելցուկ կմնա: Կոռպերատիվին պիտի ծախեմ»:

— Հա, շարունակեց Հարությունը, — յերբ վոր Փուդեյանը սոցմքում կազմակերպեց իր բրիգադում, յես իմ ողակով մրցում եյի Խաթլամաջանի ողակի հետ:

Գարնանացանի աշխատանքներում, իմ ողակը մրցումը տարավ: Յես յերբեք առանց իմ ծրագրած աշխատանքն ավարտելու, հանդիսատ չեյի առնում: Իմ ողակի տղաներն, անգամ ծիսելու յել չեյին կանգնում, մինչև վոր ուզած գործը չվերջացնելինք: Ինչքան ել ծանր լիներ աշխատանքն, իմ ողակի տղաները չեյին քաշի: Իիշում եմ, ցուրտ՝ անձրեկոտ որեր լինում և մենք չեյինք կարողանում մեր պլանը կատարել, եղ որը մեր քունը չեր առնում: Ուրիշները փախչում, վրաների տակ եյին մտնում, քնում եյին, իսկ մենք պահակի պես հսկում եյինք յեղանակի վրա: Հենց վոր քիչ պարզում եր յեղանակը, իսկույն յսեթ լծում եյինք ձիերն ու պակասը լրացնում:

Մրցանակ տանողներին պարզեվատրեցին, իմ ողակն ստացավ փոխանցիկ կարմիր դրոշ, իսկ յես ու իմ ողակի լավ հարվածայինք:

Քաղհանի ժամանակ ել իմ ողակը մնաց հարվածային ու մրցումը տարավ: Փոխանցիկ կարմիր դրոշը նորից մեր ձեռքում մնաց:

Գարունն արդեն վաղուց անցել եր, մոտեցել եյին ամռան շոգ, կրակոտ որերը: Դորշ ամպերը վաղուց փախել եյին պարզ յերկնքից և արեվի կաթնագույն ճառագայթները շուայլ կերպով ջերմում եյին վոսկու պես գեղին արտերը: Ցորենը բոյ եր քաշել, հասկերը լցվել ու կախվել եյին, չնձի ժամանակն եր: Իմ ողակը կազմ պատրաստ, հնձի դուրս յեկավ:

Հինգ վեց հեկտար, ոեկորդային եղ թիվը, մեզ համար արդեն խաղ ու պար եր դառել:

Քաղբաժնի մեքենան նորից արտից արտ, բրիգադից բրիգադ, կոլխոզից կոլխոզ եր թուչում:

— «Տղերք, աչքի լույսի պես մաքուր պետք ե հավաքել բերքը, վոչ մի հատիկ կորստի չմատնել»:

Նորից ողակից ողակ եյին շրջում ընկեր Դոկուկինի այս խոսքերը: Իմ տղերը հերոսական աշխատանքի շնորհիվ, մենք հունձն ավարտեցինք ժամանակից շուտ, վոչ մի հատիկ մեր արտերում կորուստ չեղավ:

Նորից իմ ողակը բուքսիրի գնաց:

Նորից փոխանցիկ դրոշը իմ ձեռքում մնաց:

ԶԵ վոր մեջտեղն ունեվոր կյանքի, պատվի ինդիր եր դրած: Հունձն ավարտեցինք, հարկավոր ե ցորենը կալատեղ տեղափոխել: Իմ ողակն առաջավոր ե, քուն ու դադարի ժամանակ չի:

Աշնանացանի ժամանակ ինձ բանակ տարան: Յես չկայի: Բայց չե վոր իմ ողակն արդեն քննություն եր բռնել: Ես անգամ ել փոխանցիկ գրոշը իմ բրիգադի ձեռքում մնաց: Իսկ յես բանակում, հարվածային մարտիկի կոչում ստացա: Հարկավոր եր լավ սովորել ունեվոր կյանքի պաշտպանության գործը, յես ել սովորեցի: Ինձ մի պինջակ նվիրեցին բանակում:

Յեկ հիմա, յերբ սկսել ենք գալիք տարվա նախապատրաստական աշխատանքները, ես մեր գրաված նվերը — փոխանցիկ կարմիր դրույթ — կոլխոզի բոլոր ողակների կովախնձորն ե դառել:

— Մի քանի խոսք կուզեյի ասել իմ անձնական կյանքի մասին: Իմ ընտանիքում հիմա աշխատող ձեռքը մենակ յես չեմ: Հայրս ել ե աշխատում, կոլխոզում նրա տարիքին և ուժեղին հավասար աշխատանք կա: Հետո հայրս իր կամքով ե աշխատում, ասում ե՝ «գուրս չի գալիս տունը նստեմ, ուզում եմ վոր ես կյանքի կառուցման համար գոնե յես ել մի չոփտեղիցը ժաժ տամ»:

59.-ը աշխատանքային որ ունի հայրս: Աշխատում ե նաև կինս: Նա աշխատում ե կԱֆ-ում: Նա շատ աշխատունակ, առույգ, 22 տարեկան աղջիկ ե, վաստակել ե 220 աշխոր:

Աշխատում ե և մեծ քույրս, նա 20 տարեկան ե, իսկ մյուս փոքր քույրս սովորում ե քաղաքում: Յերբ ամառը գյուղ ե գալիս, պարապ չի նստում տանը: Նրա համար ել զբաղելու միջոց կա, գլխավորապես սիրում ե աշխատել մանկական հրապարակում:

Հինչեւ դեկտեմբերի մեկն, իմ ընտանիքն ինձ հետ միասին կաստակել ե 662 աշխոր, ենակես վոր մինչև հունվարի մեկը, զեռ առաջներս մի ամիս կա: Յես համոզված եմ, վոր այդ թիվը կհասցնենք մինչև 700-ի: Իմ ընտանիքի ամեն մի անդամին՝ 1000-ից ավելի կիրոգրամ բերք ե հասնում:

— Դե, հիմի դուք ասեք, յես ունեվոր եմ այսոր թե վոչ: Իհարկե, — մեծ հրճվանքով ինքն իր պատասխանեց Հարությունը:

Բերքի մի մասն արդեն ստացել եմ, մյուս մասն ել ես մի քանի որ կատանամ: Նույն իսկ չգիտեմ, թե վորտեղ եմ տեղափորելու եղբան բերքը: Յըդեն խորհուրդ եմ անում կնոջս ու քրոջս հետ: Նրանք իրենց համար հագուստեղենի պատրաստություն են տեսնում: Իսկ յես յերկաթի մահճակալ և փոք-

թեկ գրասեղան։ Փոքրիկ քույրս՝ իր համար գրքերի ու թերթերի պահարան ե ուղում, իսկ հայրս տան կահ-կարասիք։ Յերբ հորս հարցը, թե իր տղայից ինչ և անձամբ պահանջում, նա ծիծաղելով, իր թափ հոնքերի տակից վրաս նայեց և ձեռքով մորոնքը շոյելով, ասաց։

— Մի լավ կարմիր դադաղ։

Մենք բոլորս ծիրաղեցինք և վորոշեցինք հայրիկի համար առնել մի տաք քուրք և մի զույգ վալինկա։

Հարությունը լոեց։ Նա մի խոր շունչ քաշեց և ուղղակի աչքերիս նայելով, ձեռքը ծոցագրպանը տարավ։ Ինձ թվաց, թե նա բողոքելու յե, վոր յես նրան ստիպեցի իր սովորությանը հակառակ, եսքան յերկար խոսել։ Բայց վոչ, նա գրպանից գուրս քաշեց մի տասնապատիկ ծալած, կես ոռւսերեն, կես հայերեն թերթ։

— Ես մեր «Ենուտիզաստն» ե, քաղբաժնի որդանը։ Եստեղ իմ մասին են գրել, վոր ուղում եմ նվիրել ձեզ։ Ինչքան վոր կարդաք, կհիշեք ինձ։ Յես վերցնելով թերթը, աչքի անցկացը հետեւալ թղթակցությունը։

«Մագոյանը չի հանձնում կարմիր դրույ

«Հեղ—ալիք» կոլխոզի հարվածային Մագոյան Հարությունի հերոսության մասին կարելի յե պատմել շատ, բայց յես կգրեմ միայն մի փաստի մասին։ Հարկավոր եր պետությանը հասանելիք—վերջին սայլ հաճարը տեղափոխել ելեփատոր։ Տեղափոխությունը հանձնարեցին լավ հարվածային Մագոյան Հարությունին։ Ուշ յերեկո յեր, յերը նա վերադարձավ ելեփատորից։ Յեվ յերը Մագոյանն իմացավ, վոր ալյուր չկա և քրիգադը վաղը մնալու յե առանց հացի, ձիերն առանց արձակելու, ցորենը բարձեց և մեկնեց ջրաղաց։ Առավոտյան վաղ արշալույսին նա արդեն ալյուրի հետ մեկտեղ բրիգադի իջեցնումն եր։

— Նու, հիմա գնա և հանգստացիր,—ասացի յես։

— Իսկ ով պետք ե աշխատի իմ լոբոգրեյկայի վրա։

Յեվ վոչ չգտնվեց լոբոգրեյկայի վրա աշխատելու համար։

— Ի՞նչ անենք, թող եսոր անգործ կանգնի,—ասացի յես։

Հարությունն այլ յեփս չխոսեց, սալը թողնելով պահպանի մոտ, գնաց իր ձիերի հետեվից։ Վոչ վոք չկարողացավ նրան համոզել, վոր գնա հանգստանա, չնայած նրան, վոր մի ամբողջ որ չեր հանգստացել, աշխատել եր։

Յերեկոյան, չափողը հայտնեց որվա աշխատանքի արդյունքները։ Մագոյանն ես որ ել տվել եր 5 և կես հեկատը։ Կոլխոզի լավ հարվածային, Խաթլամաջյանը, փորձեց Մագոյանից առնել առաջնությունը, բայց վոչինչ դուրս չեկավ։ Յեվ հիմա հնձից հետո, սկսվել ե կրելու աշխատանքը, նորից նա չի հանձնում կարմիր դրոշը, Բոլորը կրում են 15—16 վոտք, իսկ Հարությունը 20—22 վոտք։» Բրիգադիր

Իհարկե հիմա զարմանալի չի թվա, թե ինչու Մագոյանի ընտանիքի ամեն մի անդամին, իրենց հալալ քրախնքով վաստակած բերքից համառում ե 1000-ական կելոգրամ։

Դժվար ու շատ դժվար է հիմի Հարությունին շեղել ճանապարհից, կամ ցույց տալ նրան ունեվոր կյանքի մի ուրիշ ճանապարհ։

— Մի՞թե յես իրավունք ունեմ, —ասում ե Հարությունը, — մի՞թե յես իրավունք ունեմ, թեկուղ մտածելու այն մասին, վոր կարող ե գոյություն ունենալ ունեվոր կյանքի մի ուրիշ ճանապարհ։ Այն, կար ժամանակ, վոր յես մտածում եյի այդ առթիվ, իսկ հիմա...»

Դուք գիտեք, վոր յես ու իմ ընտանիքը պատիվ ունեցանք մեր իսկ տան մեջ մի հսկայական բանկետ կազմակերպել, և գիտեք ում հետ — մեր քաղբաժնի և հետո արտասահմանյան պատգամավորների հետ — ամերիկացի, գերմանացի, բելգիացի, ֆրանսիացի և այլն պատգամավորների հետ։ Շուտով հացիս ավելցուկը ծախելու յեմ։ Պետության պետք ե ծախեմ։ Ինձ պետք չի շուկայի մի քանի ավել կոպեկները։ Չե՞ վոր կարող ե հացն ընկնել մեր թշնամու, սպեկուլանտի ձեռքը։

— Ցուեսություն։

Համարյա միշելվույն ժամանակ ասացինք մենք և ամուր սեղմելով իրար ձեռք, բաժանվեցինք։

Քաղբաժնի կարմիր գրքում, Մագոյանի անունը մեծ տառերով ե գրված։

Վոգեվորված, շատ վոգեվորված եր խոսում քաղբաժնի պետը ընկ։ Դոկուկինը Մագոյանի մասին։ Նրա առանձնասենյակի պատերից մեկի վրա փայլում եր Մագոյանի մեծադիր յուղաներկերով զարդարված գույնզգույն նկարը։

## Այն մասին, թե ինչ պատմեց հարվածային բրիգադիր Աղանյան Մկրտիչը

... Մենք ներս մտանք նրա խրճիթը։ Դա մի քառակուսի տնակ եր, չորս կողմերից միահավասար լուսամուտներով։ Թիթեղյա տանիք, կարմիր աղյուսից ամուր պատեր։ Մուտքի դիմաց մի փոքրիկ պատշգամբի նման—նորից թիթեղյա տանիքով բարձրություն։ Չորս անհավասար սենյակների յերաժանված Մկրտիչի տունը, Առաջինը և ամենամեծը, դա այսպես ասած, ննջարանն ե, իսկ հաճախ՝ սրահ։ Մյուս ավելի փոքր սենյակը սեղանատունն ե և հենց նրա կողքին ել՝ ինչպես Մկրտիչն եր անվանում՝ «ղալմաղալի տունն ե»։

Եյդ սենյակում, բացի ուրիշ շատ բաներից ու քաղցրավենիքի շարք կանգնած կճուճներից, աչքի եյին ընկնում տողափոր դեղին ու սպիտակ դգումները, վոր փառավոր կերպով բազմել եյին մաքուր ու չոր հատակի վրա։

Յեկ վերջին ու փառավոր սենյակը դա ընդունարանն եր, նրա հյուրասենյակը։

Մկրտիչի տան ամենագլխավոր զարդերից մեկն ել այն եր, վոր այնտեղ մի անսովոր ուրախություն կար։ Հինգ փոքրիկներ—աղջիկ, տղա, սրանց վրա ավելացրու և մի քանիսն ել հարեվանների յերեխաներից, վոր խաղում եյին, յերգում, ծըլվում գարնան սարյակների պես։ Յերբ յես ներս մտա, ինձ թվաց, թե գարուն ե, ավելի ճիշտ, Մկրտիչի տունը լիքն եր մի տեսակ գարնանային խինդով։ Յես գուցե դեռ յերկար զբաղվեյի Մկրտիչի խրճիթով ու նրա թմբիկներով, յեթե Մկրտիչը չընդհատեր իմ հետաքրքրությունը։

— Նոր եմ գնել ես տունը—ասաց Մկրտիչը, — ես տարի, կոլխոզում վաստակված իմ աշխատանքի որերի հաշվին։ Լավ ե չե, ձեզ ել ե դուր գալիս, բայց յեթե դուք իմանայիք, թե մինչև ես տարի ինչպիսի տան մեջ եյի ապրում, գուցե զարմանայիք։

Հետո յերբ մենք դուքս յեկանք փողոց, նա ինձ ցույց տվեց այն խրճիթը, վորտեղ իսկապես ծնվել, ապրել ու հասակ եր առել Մկրտիչը։ Գիշեր եր Պարզ յերկնքից լուսինն իր կաթնաշղաղ ցոլքերով վողողել եր գյուղը, Կապուտակ, գեղին ու կաթնագույն ելեքտրական ճրագների պես փայլում եր աստղավառ յերկնքը։

— Այ, ես տունն ե։

Նա ցույց տվեց ինձ մի հողակույտ, ավելի ճիշտ մի փոքրիկ բլուրանման բարձրություն, վոր վոտքից մինչեվ գլուխ ծածկված եր ձյունով։

— Ես հողաթմբին նայելով,—շարունակեց նա, — յես մի տեսակ եմ լինում, ճիշտն ասած զայրանում եմ։ Ես ե յեղելի իմ որորանն, ընկեր, եստեղ ե ծնվել, ապրել ու գերեզման իջել հայրս։ Եստեղ են ծնվել ու հող գառել իմ պապերը։ Բայց յես վորոշեցի ուրիշ կերպ վարվել նրա հետ, — մի տեսակ հրճվանքով ասաց Մկրտիչը։

— Այսինքն՝ դու վորոշեցիր ավելի շնորհանդանին հանձնել, քան նա քեզ, չե, — ավելացրի յես։

— Հա, հենց եղածու, շատ, շատ ճիշտ ասացիք։

— Բայց այդ բնչպես յեղավ, վոր դու վորոշեցիր ու այդպիս անխախտ կերպով կատարեցիր քո վորոշումը։ Ի՞նչ եր պատճառը, կամ ովք քեզ դրվեց մեկ անգամ ընդմիշտ հողին հանձնել պապերից մնացած այդ միակ հողակույտը, այսինքն՝ խրճիթը, ուզում եյի ասել յես։

Մենք վերադարձանք տուն։

— Ինչքան ես տան կողքովն անց եմ կենում, — պատմեց Մկրտիչը, մի տեսակ ուրախությունն ու տիրությունը սիրտս փակում ե։ Իսկ յերբ պատահում եմ ձեզ պես մարդկանց, կամ յերբ զննող աշքով նայում եմ ես իմ քարե տան վրա, սիրտս մի տեսակ հանգստանում ե, և յես թեթևություն եմ զգում։

Աչքու դեռ նոր եյի բաց արել և մեր ընտանիքի համար թեվ ու թիկունք պետք ե լինեյի, յերբ ինձ սպառաւ տարան։ Վեց յերկար ու ճիգ տարիներ կյանքս ծառայության մեջ անցկացրի։ 1918 թվին եր, յերբ տուն վերադարձաւ։ Ընտանիքս քայլած եր, վոնց վոր ասում են՝ քարը քարի վրա չեր մնացել։ Սկսեցի զբաղվել տան գործերով։ Հարկավոր եր տնտեսությունը կարգի բերել։

Մեր կողմերում դեռ տիրում եր Դենիկինի զինվորական իշխանությունը։ Զորակոչ եր ինձ ել կանչեցին ծառայության ճիշտ ասում, չեյի ուզում գնալ։ Մեկ վոր—ընտանիքս եր

քայքայված ու սովի մատնված, մեկ ել վոր Փրոնտի քայքայման ժամանակ, մենք լսել եցինք բոլցելիների մասին: Յես կարծում եյի, թե մեզ մոտ բոլցելիներ կլինեն, բայց ափսոս այդ դեռ այդպես չեր: Ինչ յերկարացնեմ, շատ զոռեցին, մի անգամ ել մի լավ քոտակ տվեցին: Ստիպված յեղա գնալ, բայց վորոշել եյի Դենիկինին չծառայել: Շատ աղոտ, բայց այնուամենայնիվ հասկացել եյի, թե ովքեր են բոլցելիները և նրանց դեմ կովել չեյի ուղում: Այն զորամասը, վորտեղ ինձ ուղարկեցին ծառայելու, Մանիչի մոտ եր գտնվում: Կարմիրները գալիս եյին հարավ-արեվելքից:

— Վոչ. ասացի յես ընկերներիս, յես Դենիկինին չեմ ծառայելու: Մյուս որը, գիշերը, յես թողեցի Մանիչի ֆրոնտը: Այնուհետ դասալիք դարձա, մինչև կարմիրների գալը:

Հենց վոր կարմիրները յեկան, յես զրվեցի քաղաքացիական միլիցիայում և սկսեցի ծառայել:

1922 թվին յես թողեցի ծառայությունը և անցա գյուղատեսական աշխատանքի:

Յերբ առաջին անգամ կոլխոզ կազմակերպվեց, յես կոլխոզ մտա, հետո բերելով իմ ամբողջ լծկանը—հինգ և մեկ ձի, վորը յես վաստակել եյի խորհրդային իշխանության ժամանակ: Շատ դժվար եր ձեռք բերվել իհարկե եղ մի քանի լծկանը, բայց բավական եր մի թեթև աղետ, վոր վոշի դառնար եղ բոլորը: Կյանքն ինձ սովորեցրել եր, յես լավ գիտեյի, հասկանում եյի: Մոռացա ասել, վոր մինչև կոլխոզ մտնելս, յես վեցը յեղ ունեյի, վորից մեկը քրոջս հասանիթին կերանք. հիմք, ո, հիմի շատ եմ փոշմանել:

Ախր վո՞նց կարելի յե, վոր մարդ եր ձեռքերը կտրի ու մուշտա կոփի մտնի, և, վո՞նց: Եղանք ել յեզն ե, լծկանը: Ախր վո՞նց կարելի յե, վոր մարդ լծկանը փչացնի, վատ պահի, ծախի, վո՞նց: Յես հիմի շատ լավ եմ հասկացել, ել եղակի յերբեք:

Յերեսուն թիվը եր, կոլխոզում մի տեսակ խառնակչություն կար: Մեր վեղում գեռ մնացել եյին կուլակներ: Մենք եղ բանը աշքաթող եյինք արել: Եղ կուլակներից մի քանին ել դեռ կոլխոզում կային: Բացի այդ՝ մեր քշած կուլակների բարեկամները, վորոնց հետ մենք՝ հարազատ կոլխոզինիներս, լավ կապված չեյինք, նրանց աշքաթող եյինք արել: Այ, հենց եղ պիսի մի շարք պարզ պատճառներից կոլխոզում խառնակչություն ընկալի:

Գիշեր ցերեկ քուն չունեյի, շարունակ սրան նրան աշխատում եյի համոզել, հասկացնել: Շարունակ կոլխոզի գոմում,

ամբարների մոտ, վարչության նիստերի ժամանակ, մի հոսքով ամեն տեղ հասկացնում եյի խելքիս չափ, ում պատահում եր:

Յեկ այդպես կոլխոզից շատերը դուրս յեկան:

Յեղայրս ել կոլխոզից դուրս յեկավ, բայց հետո, ինչպես մլուսները, նորից վերադարձավ կոլխոզը:

Հիմի մեր կոլխոզում 935 տնտեսություն կա: Մեր կոլխոզի թագում, մենատնտեսների թիվը 10-ից ավելի չի լինի: Կոլխոզում բացի գյուղատնտեսական դաշտային աշխատանքներից, յես տարել եմ նաև ղեկավարող աշխատանքներ, և ինչպես տեսնում եմ, հիմի յել բրիգադիր եմ:

— Ե՛, ընկեր, — շեշտակի համոզմունքով ասաց Մկրտիչը, եղ որերն ուրիշ որեր եյին. համա մենք ենպես փակեցինք եղ որերի դուսերը, վոր յերբեք, ել յերբեք չբացվի:

— Իսկ ի՞նչպես դու բրիգադիր դարձար, վորն ե քո տշխատանքի գրավականը, վոր քո բրիգադն եղքան հոչակ ե ձեռք բերել, — հարցի յես նրան:

Նա լուս մոտեցավ սեղանին, լուսիթյամբ ծխախոտի մի զպանակ վառեց և ծխի հաստ բուլան ողի մեջ բաց թողնելով, ասաց.

— 1933 թվի գարնանն եր: Գարնանացանի հարցը խիստ եր զրված, հարկավոր եր կրակի պես աշխատել:

Յերրորդ բրիգադում գրությունը շատ վատ եր: Զիերի մեծ մասը սատկել եր: Հույս չկար վոր եղ բրիգադը ցանքսի տակից դուրս կտա: Յերրորդ բրիգադը յետ եր քաշում «Սոց—փարոս» կոլխոզին: Գարնանացանի գործը ձգձգվում եր: Վատ եր, շատ վատ եր գրությունը:

Յելք եյինք վիճառում ու թվում եր, թե յելք չկա:

Յեկավ քաղբաժնը, ծանոթացավ կոլխոզի հետ, յեղած դրության, ուժերի, միջոցների հետ և առաջարկեց բրիգադի ղեկավարությունը փոխել կուրքչի ջը վորոշեց ինձ նշանակել բրիգադիր: Յես կուսակցության թեկնածու յեմ, յեթե կուսակցությունն ինձ առաջարկում ե գնալ բրիգադ—կնշանակի հարկավոր ե գնալ, մտածեցի յես: Յեկ այդպես, յես նշանակված եյի բրիգադիր:

Գարնանացանի սկսելու ժամանակն եր, ձիերից շատ քշերն եյին կարգին մնացել: Մանր եր դրությունը: Յես կարգի բերեցի բրիգադի ինվենտարը և կազմակերպեցի բրիգադի անդամներին: Բացի ժողովներից, յես անձամբ գնացի իմ բրիգադի անդամների տները և համոզեցի նրանց, վոր հարկավոր ե աշխատել:

Այ, եստեղ ե, վոր չես կարող մոռանալ ընկ. Դոկուկինին.  
թե առանձնապես եղ հարցում ի՞նչքան ոգնեց նա մեզ, եղ բո.  
լորիս հայտնի յե:

Յանքսն սկսեցինք:

Մենք սերմ չունեյինք, կառավարությունից ստացանք: Հար-  
կավոր եր շատ զգուշ լինել և արթուն պահպանել սերմը կու-  
լակային տարրերի, սիմուլանտների, լոդիների, գողերի ձեռ-  
քից: Հարց եր դժված, վոր վերջին հատիկ սերմը հողին հան-  
ձնել: Իմ բրիգադի անդամներն այդ բանը լավ գիտելին: Այդ-  
պես ել արեցինք: Ճիշտ ե, շատ անգամ գողության փորձեր յե-  
ղան, բայց բռնվեցին:

Ինչպես ասացի, յերրորդ բրիգադը կովազի ամենահետ ըն-  
կած բրիգադն եր: Մեր բրիգադն աշնանավար չուներ և հենց  
եղ պատճառով ել մեր աշխատանքը յեռապատկվում եր:

Դժվար եր, շատ դժվար, բայց հաղթահարեցինք և յերրորդ  
բրիգադը: Նա ամոթալի վիճակից դուրս յեկավ և հավասար-  
վեց մյուս բրիգադներին: Քաղհանի պլանն ել ժամանակին կա-  
տարեցինք:

Պետք եր հինգ որում քաղհանել 310 հեկտար: Իմ բրիգադը  
մրցում եր Սուխարյանի բրիգադի հետ: Մեր բրիգադը վորո-  
շել եր քաղհանը ժամանակից շուտ ավարտել, հենց դրա հա-  
մար եր, վոր բրիգադի ակտիվը կարծես իրար գլխով կպավ.  
Կյանքը սկսեց յեռալ: Գլխավորապես մոքիլիգացիայի յենթար-  
կեցինք կանանց:

Առաջին որն աշխատանքի դուրս յեկան 40 հոգի, յերկրորդ  
որը—80 հոգի, յերրորդ որը—110 հոգի:

Ինձ հետ շարունակ միշտ դաշտումն եր լինում և մեր բրի-  
գադի կուսկազմակերպիչը: Նա յել շատ եր ոգնում ինձ, ցուց-  
մունքներ եր տալիս կամ ուրիշ միջոցներով ողնում: Վրա հա-  
սավ տեխնիկական բույսերի քաղհանը: Հարեավոր եր 10  
որում քաղհանել 108 հեկտար: Յես իմ բրիգադի ամեն մի ան-  
դամին հանձնարեցի մեկ հեկտար: Եղ ժամանակ յեթե դաշտ  
գայինք, կթվար թե դաշտում վոչ վոչ չկա, բայց 10 որում  
ավարտեցինք քաղհանը:

Բերքահավաքի ժամանակ, յես, բացի իմ բաժին բերքը ժա-  
մանակին հավաքելը, 5 զույգ յեզ և 22 աշխատող ձեռք ուղար-  
կեցի առաջին բրիգադին բուքսիրի, հարկավոր եր մի հատիկ  
բերք անգամ չկորցնել:

Հարկավոր եր կառավարության հասանելիք պարտքը ժա-  
մանակին հանձնել:

Դրա համար իմ բրիգադը մի կողմից քաղում ու դիղում եր,  
մյուս կողմից կարում:

Յորենն արտից կալսիչին հասցնելու համար, պակասում  
եր լծկանը: Այդ հարցը յես տեղափոխեցի արտադրական խոր-  
հրդակցություն:

Վորոշեցինք մոքիլիգացիայի յենթարկել կովերը: Առաջին  
հերթին յես իմ կովը տարա. այգափիսով յերկու որվա մեջ աշ-  
խատանքի անցան 40 կովեր: Բացի այդ՝ մյուս անասուններով  
մենք գիշերն ել եյինք աշխատում—ցերեկը քաղում, իսկ գի-  
շերը կրում եյինք:

Յես սովորություն չունելի աշխատանքի ժամանակ սրան  
կամ նրան նկատողություն անել: Վոչ, այդ չեր ոգնում, այլ  
հաճախ տեղիք եր տալիս մասնավոր վեճերի, վորն ել ավելի  
ժամանակ եր խորում ու վեսառում գործին: Յես իմ գրպանում  
պահում եյի մի բլոկնոտ և մի մատիտ: Շըջում եյի աշխատանքի  
վայրը, լինում եյի բոլոր ողակներում: Գրի եյի առնում բոլոր  
աշքի ընկնող լավ և վատ աշխատողներին, նրանց առավելու-  
թյուններն ու թերությունները: Յեվ վորովհետեւ ամեն յերկու  
աշխատանքից հետո մենք կատարում եյինք 10 բոպեյսվ հա-  
վաքներ, ապա հենց այդ տեղ ել նշում եյինք բոլոր արձանա-  
գրված յերկուլիները:

Զմուռանամ ասելու, վոր մեր բրիգադում կային նաև մի  
քանի հոգի սիմուլանտներ և լողեներ: Որինակ, Բարինյան  
Փառանձեմը, վոր հիմա ուղղվել եւ: Քարտաշյան Հայկանուշը,  
վորն անցյալ տարի վաստակել եր 10 աշխոր, իսկ ես տարի  
վաստակել ե 100-ից ավել աշխոր: Բայց մի քանին ել կան,  
վոր մինչև հիմա ել լողբություն են անում, սիմուլանտ են:  
Այդպիսիներից են Բարինյան Սոֆյան, 23 աշխոր ունի կամ  
Քարտաշյանը, վոր վոչ մի աշխոր չունի: Վոչինչ, միսն առանց  
վոսկոր չի լինի, բայց մենք դրանց ել կսովորեցնենք, թե ինչ-  
պես պետք ե աշխատել: Պետք ե շեշտել, վոր մեր բաղբաժինն  
եղ սիմուլանտների գաստիարակության գործում մեծ գեր ե  
խաղում և շատ մեծ գեր ե խաղացել:

Եղափիսի որերից մեկը շատ լավ եմ հիշում:  
Կուլտուրայի տանը հրավիրված եր հավաք:

Քաղբաժինն եր հրավիրել  
Որակարգում զրված եր մի հարց.  
Պայման սիմուլանտների դեմ.

Հարկավոր եր ընտրել նախագահություն, քվեյարկվում ե  
թեկնածուների ցուցակը:

Բարեխան Փառանձեմ սիմուլյանտ, առաջարկվում է նախագահության մեջ, այդպես, նախագահության բոլոր անդամներն ընտրվեցին սիմուլյանտներն ու լոդրները:

— Թե ինչքան ծիծաղեցինք մենք եղ որն, ընկեր, չես կարող պատկերացնել: Յեզ հետո, զիտեք ինչ, եղ բոլոր նախագահության անդամ սիմուլյանտներն ու մի քանի ուրիշները, մյուս որը բոլորն ել գնացին աշխատանքի: Իսկ նրանցից շատ շատերը հիմա հարվածայիններ են: Յես կուզեյի և մի քանի խոսք ասել այն մասին, վոր իմ բրիգադում կալին և հրաշալի հարվածայիններ: Այդպիսիներից եյին, որինակ՝ Խարախաշյան Խաթունը, Խարախաշյան Աղվենին, Աղամյան Ռիպիմեն, Ջիկյան Խրիստանուշը և ուրիշները:

Հենց եղ հարվածայիններն եյին, վոր մեր բրիգադն առաջ անցավ, և հիմի ել առաջավոր ե:

Ոգոսասի ուղիղ 10-ին ավարտեցինք բերքահավաքի բոլոր աշխատանքները և գիշերվա ժամը 11-ին քաղբաժնին, մեր ամփոխարինելի ղեկավար, մեր սիրելի Դոկուկինին ուղարկեցինք ուսպորտ:

Ժամկետից 15 որ առաջ հանձնեցինք կառավարությանը հասնելիք հացը:

Աշխատանի պանը կատարել ենք լրիվ: Ցանել ենք 200 հեկտար, վորոնց 40 հեկտարը մաքրել ենք արևածաղկի կիսաշարդ ցողուներից և արմատներից, 80 հեկտար ել աշխատավար ենք արել:

Հիմի իմ բրիգադն առաջինն ե ամբողջ կոլխոզում: Եղ փառվոր առաջնությունն իմ բրիգադը ձեւաք ե բերել դրական աշխատանքի շնորհիվ:

Մկրտիչը լոեց: Յեզ յես պատրաստվում եյի շնորհակալութուն հայտնել և դեպի դուռը շարժվել, յերբ նա դարձավ ինձ և ասաց.

— Հա, մոռացա են ել ասել ընկեր, վոր ես շքեղ տան մեջ ապրելու համար, հարկավոր ե շքեղ ապրուստ ունենալ: Այ, յեթե կցանականաք, յես ձեզ կասեմ, թե վոնց եմ ապրում, կամ ինչպես ունեվոր կյանքի ճամբան եմ անցնում:

Նա թվեց ինձ իր աշխատանքի որերն ու իր ստացած

Ամեն աշխորին ստանալու յեմ վեց ու կես կիլոգրամ բերք: Հիմի գուք հաշվեք, թե ինչքան կլինի: Իմ հաշվով յես ստանալու յեմ ենքան բերք, վոր վոչ մի ժամանակ չեմ ունեցել:

Հինգ յերեխա ունեմ, ինչպես տեսնում եք, ինչպն ել տաքտաք հազնված են: Պրանցից յերեքը սովորում են դպրոցում: Ել վինց իմ ես քարե տունը մոռանամ, ել վինց չինդամ և եսպես հազար, հազար պատմություններ չպատմեմ, յերբ պալենական հին խրճիթի հողակույտը տեսնելիս, վերջիշում ես կյանքից անցած, գնացած որերը:

Դե հիմի ել կինդրեմ, վոր բարեհաճեք մեր ես ունեվոր կյանքից, նոր կոլխոզային սեղանից քիչ հաց անուշ անեք:

Մենք նստեցինք ընթրիքի: Մկրտիչի սեղանը զարդարված եր սպիտակ հացով, տապակած գետնախնձորով, կարագի պես պանրով, կարագով, կաթի սերով, տարեր գույնի ու տեսակի թթուներով և ուրիշ շատ, շատ բաներով, իսկ վերջն ել շաքարով և մուրաբայով քաղցր թեյ:

Ուշ գիշեր եր:

Մկրտիչի ընթրիքի ճոխ սեղանից հետո, յես փողոց դուրս յեկա:

— Ընկեր,—վերջին անգամ հետեւիցս կանչեց Մկրտիչը, — հաճախ հանդիպեցիք մեզ մոտ, հարկավոր բան ե: Մեկ ել չմոռանաք իմ հայրական խրճիթի պատմությունը:

Զգիտեմ թե ինչ կասի Մկրտիչը, յեթե կարդա գրածու, գուցե նեղանա, վոր եղ պատմությունը յես պատմեցի շատ ուրիշներին, կամ չիշատակեցի ճոխ սեղանի զարդերից մեկն ել, փորթուկալի սոկով պատրաստած հացի գինին:

Վոչին՛չ, յես գոհ կլինեմ դրանից, իսկ Մկրտիչն ել ավելի:

Յես փողոցումն եյի: Կոլխոզային գիշերը պարզ եր: Նորից ըյուրավոր ջաներով վառվում եր յերկինքը: Գյուղը քնել եր: Կոլխոզային գիշերը, մայրական քաղցր որորի պես կարծես թե ճոճում եր գյուղը: Խրճիթների շուշանափայլ ուսերին պառկել եր լուսաշաղադ գիշերը:

Բայց անհանգիստ եր վարչությունը: Անհանգիստ եր բրիգագիր Ասլանյան Մկրտիչը: Անհանգիստ եր քաղբաժինը: Ընկ. Դոկուկինի առավոտը կարծես թե նոր եր բացվում: Ընկ. Յեղագալյանը գետ խորասուզված աշխատում եր:

Տըրակտորների արհեստանոցում գեռ աղմկում եր ելեկտրական մատորը:

Կոլխոզային ունեվոր կյանքի պայքարն եղ խաղաղ լուսնկա գիշերում պատրաստվում եր մի նոր, ավելի գնական արշավի:

1. Աղանյան Մկրտիչ . . . . 370 աշխոր

2. Աղանյան Սանթուշ-կինը . . . . 48 աշխոր

Ընդամենը 418 որ:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Զբույց պետի և ուրիշների հետ . . . . .	5
Զարդար . . . . .	24
Թե ով վերցրեց առաջնությունը . . . . .	40
Այն մասին, թե ինչ պատմեց հարվածային բրիգադիր, Առլանջան Մկրտիչը . . . . .	52



39318

ԳԻՒԾ 1 ԲՈՒՔ. 15 ԿՈ.Տ.  
Цена 1 Руб. 15 Коп.

9084-1

ԽՎ 1  
ՑՄ 2

На армянском языке

Арсен Оганисян  
НА КРАСНОЙ ДОСКЕ

АЗОВО-ЧЕРНОМОРСКОЕ  
КРАЕВОЕ ИЗДАТЕЛЬСТВО

Գ.Ր.Պ.Գ.Հ.Ե.Ս.Վ.Բ

ԱՌԱՋՈՎԱՆԻ ՄՊՈՎԿԻՉԱՅԻ ՓՈԼ. № 53  
ԳՐԱԿԵՆՈՒԹՈՒ (ԿԱԽՊԵՏԵՐ)